
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք.

ՀԱՍՀ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ


ՏԵՂԵԿԱԳԻՐ

II

ԳԻՐՔ



ԵՐԵՎԱՆ ՊԻՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ 1937



Գրքեսարեներ բոլոր յերկրների, միացե՛ք.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ՏԵՂԵԿԱԳԻՐ

II

ԳԻՐՔ

Դրա
3465



ԵՐԵՎԱՆ ԳԻՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ 1937



Գիտության տպարան
Պատվեր № 48
Տիրաժ 500



ՊՐԻԳՈՐԻ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻՉ ՈՐՋՈՆԻԿԻԶԵ
(1886—1937)

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆԴԱՄԵՆՅԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ԸՆԿԵՐ ՈՐՋՈՆԻԿԻԶԵՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մեր կուսակցությունը ծանր կորուստ կրեց. փետրվարի 18-ին սրտի կաթվածից հանկարծամահ եղավ ընկեր Գրիգորի Կոնստանտինովիչ Որջոնիկիձեն։

Մահը մեր շարքերից խլեց ակնառավոր գործիչին, կուսակցության գործի համար պայքարող աննկուն մարտիկին, սոցիալիստական ինդուստրիայի վարչության հաղթանակների մարտական գործակալին ու կազմակերպչին, մեր մերձավոր և սիրելի ընկերոջը ու բարեկամին։

Իր ամբողջ պայծառ կյանքն առանց ճեպորոցի ընկեր Որջոնիկիձեն նվիրեց բանվոր դասակարգի գործին, մարդկության ազատագրման գործին, կոմունիզմի գործին։ Դեռ պատանի տարիներից ընկեր Որջոնիկիձեն կանգնեց Լենինի մեծ դրոշի տակ և այն ժամանակվանից մինչև իր կյանքի վերջը ազնվորեն ու անձնվիրաբար առնում էր այդ դրոշն իր ձեռքերում, պայքարելով ամենաառաջավոր դիրքերում։

Նրա կյանքն անխզելիորեն կապված էր ցարական ինքնակալության և բուրժուա-կալվածատիրական ճնշման դեմ բանվորների ու գյուղացիների մղած հեղափոխական պայքարի հետ, ՌՍՖՍՀ-ում պրոլետարական մեծ հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարի հետ, սոցիալ-գավթիական բանակների ու ռասպերկրյա ինտերվենտների ջախջախումը կազմակերպելու հետ, սոցիալիզմի հաղթական շինարարության հետ։ Ցավ սմենամեծը, վորտեղ ընթանում էր նրա հեղափոխական գործունեյությունը, այդ գործունեյությունը հաղթանակ-հաղթանակի հետևից էր բերում իր հետ։

Ընկեր Որջոնիկիձեն ներկայացնում էր այնպիսի բոլշևիկի տիպար, վորը կուսակցության առաջադրած մեծ նպատակներին հասնելու գործում չգիտեր յերկյուղ ու խոչընդոտ։ Կրակուռ յեռանդը, հատուցասիրությունը և ուղղամտությունը, ժողովրդի ակնառավոր կազմակերպչի ու գեկավարի տաղանդները նրա մեջ

դուգակցվում էին մարդկանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ հանդես եկող սրտակցության ու ընկերական պարզության այն զարմանալի հատկություններն հետ, որոնք այնչափ լավ հայտնի էին բոլոր նրանց, ովքեր անձամբ ճանաչում էին ընկեր Սերգոյին և որոնցով աչքի էր ընկնում իսկական բոլշևիկ-լենինյանը։

Վերջին չորս տարվա ընթացքում ընկեր Որջոնիկիձեն կանգնած էր ԽՍՀՄ-ի ծանր արդյունաբերության գլուխ։ Նրա անվան հետ են կապված սոցիալիստական նկոնոմիկայի մեծագույն հաղթանակները։ Նրա ղեկավարությամբ կատարվեցին լուծելու մեր յերկրում հզոր առաջավոր ծանր ինդուստրիա կառուցելու ամենադժվարին խնդիրը, ինդուստրիա, որը վերափոխեց գյուղատնտեսությունը, տրանսպորտը և պաշտպանությունը։ Ծանր ինդուստրիայի աշխատողների բոլշևիկյան բանակի գլուխ կանգնած, ընկեր Որջոնիկիձեն նոր տեխնիկայի կատարելման ու տիրապետման համար մղվող պայքարի ճակատում մեկը մյուսի հետևից գրոհով տիրապետում էր դժվարագույն ամրոցներին։ Նա աչքով անցկացնում էր ծանր ինդուստրիայի ստորաբաժանումների գործիչների կադրերի՝ մինչև վերջը նվիրված սոցիալիզմի գործին, համախմբված բոլշևիկյան կուսակցության շուրջը։

Յեվ ահա այժմ, դու, թանկագին ընկեր Սերգո, մեզ հետ չես։ Այդ ծանր կորուստն անհարթելի յե։ Այդ կորուստը կսկիծով կապրեն մեր յերկրի բոլոր աշխատավորները։ Մենք քեզ կորցրինք այն մոմենտին, յերբ մեր յերկիրը հասել է սոցիալիզմի հաղթանակին։ Այդ հաղթանակների մեջ, որ մենք նվաճել ենք մեծ պայքարի միջոցով, մեծ է քո աշխատանքի, քո յեռանդի, կոմունիզմի նկատմամբ քո անսահման նվիրվածության բաժինը։

Հրաժեշտ քեզ, թանկագին բարեկամ ու ընկեր Սերգո։

Ի. Ստալին	Գ. Գեորգիևսկի	Ն. Յեժով
Վ. Մոլոտով	Ռ. Եյխե	Ի. Ապուլով
Լ. Կագանովիչ	Յա. Ռուդուտակ	Վ. Մեժլաուկ
Կ. Վորոշիլով	Մ. Կալինին	Ն. Աճեխպով
Վ. Չուբար	Ա. Ժդանով	Մ. Շկիրյատով
Ա. Միկոյան	Գ. Գոստիևի	Յա. Ցակովլեվ
Ս. Կոսիոր	Ա. Անդրեյեվ	

ՅԵՐԲԵՔ ՉԵՆ ԱՂՈՏԱՆԱ ՍԵՐԳՈՅԻ ԱՆՈՒՆՆ ՈՒ ՓԱՌՔԸ

Յերևակ բանվոր դասակարգը Քաղց իր սիրելի զավակին— Սերգոյին։ Կրևմլի պարիսպը կարծիր հրապարակում, վորը դարձել և աշխատավոր մարդկության մեծ սրբավայրը, ընդունել Վրիգորի կոնստանտինովիչ Որջոնիկիձեի աճյունը։

Սերգոյի մահը սուր, ճվլող ցավ առաջ բերեց միլիոնավոր մարդկանց սրտերում։ Այդ ցավը վերջին որերս հնչում էր հազարավոր յելույթներում, նամակներում, բանաձևերում, հեռագրերում՝ խորհրդային յերկրի և ամբողջ աշխարհի բոլոր անկյուններից։ Այդ ցավը գրված էր հարյուր հազարավոր մարդկանց դեմքերին, վորոնք յեկել էին Միությունների Տունը՝ վերջին հրաժեշտ տալու Սերգոյին։ Այդ ցավը լցրել էր Խորհրդային յերկիրն այն ժամերին, յերբ Մոսկվան Սերգոյին ուղեկցում էր նրա վերջին ուղին։ Շուտ չի անցնի կորստի ցավը։ Մեծ և դեղեցիկ կյանք և ապրել Սերգո Որջոնիկիձեն, հերոսական մարտիկի և մեծ մարդու կյանք—նրան սիրում էր մեր ամբողջ կուսակցությունը, ամբողջ բանվոր դասակարգը, նրան սիրում էին ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդները՝ բոցավառ և քնքուշ սիրով։ Կովկասի լեռնականները Սերգոյին անվանել են «առյուծասիրտ»։ Ժողովրդի այդ դիպուկ բնորոշման մեջ արտահայտված է ամբողջ Սերգոն։ Այո, նա ականավոր հեղափոխական-բոլշևիկի առյուծի սիրտ ուներ։ Իր արտի չկրմությամբ Սերգոն դեռ ուսանական առաջին հեղափոխության տարիներին թռուցիկ միտինգներում և ընդհատակյա ժողովներում բոցավառում էր հարյուր հազարավոր մարդկանց՝ Բաքվում, Սուխումում, Բագվում, Թրիլիսիում...

Սերգոն իր բոլշևիկյան արտի հուրը տարավ ռեակցիայի տարիների ձախորդությունների և զրկանքների միջով, բանտերի և Շլիսելբուրգի բերդի միջով, աքսորի և տաժանակրության միջով։ Իր արտի հրով նա առաջնորդեց Բանվորագյուղացիական կարմիր բանակի դնդերը դեպի հաղթական մարտ՝ սոցիալիզմի թշնամիների դեմ։ Իր արտի հրով Սերգոն մոխիր էր դարձնում մեր կուսակցության թշնամիներին—ևսերներին, մենշևիկներին, սրոցկիստներին և այլ ազրատունեսատական պղծությունների։ Իր արտի հրով, նա, սոցիալիզմի ինդուստրիայի բանակի հրամանատարն առաջ էր մղում միլիոնավոր բանվորների, ինժեներների, տնտեսավարների, տարիների հնգամյակների տարիներին վառում էր շինարարության պաթոսը, տեխնիկայի սերտազնման պաթոսը։

Սերգոյի ամբողջ կյանքը մի գեղեցիկ և հզոր յերգ է։ Բանվոր դասակարգը նրա մեջ անմահում էր լենինյան-ստալինյան բնույթ յեղած լուծական արժվին—այդպես էր Սերգոն։ Նա անցավ Լենինի-Ստալինի դպրոցը։ Նա Լենժյուժոյի կուսակցական դպրոցի աշակերտ էր, դպրոց, որը Լենինը կազմակերպել էր 1911 թվին՝ ընդհատակյա բոլշևիկների հիմնական կադրեր կռմելու համար։ Նա 1912 թվականին Պրավդայի կոնֆերանսի պատգամավոր էր, որտեղ վերջնականապես ձևակերպվեց բոլշևիկների կուսակցության։ Սերգոն կարմիր բանակի խոշորագույն կուսակցական կազմակերպիչներից և դեկավարներից մեկն էր քաղաքացիական պատերազմի տարիներին։ Զուր չեն, որ յերեկ ընկեր Վորոշիլովը նրա մասին բանվորագյուղացիական ամբողջ Կարմիր բանակի անունից ասաց՝

«Բանվորագյուղացիական Կարմիր բանակի պայքարի և շինարարության տարիներին անխոնջորեն կապված են Սերգո Որջոնիկիձեի անվան հետ։ Նա այն ամենաառաջադեմ ռազմական կազմակերպիչներից մեկն էր, որոնք իրենց կյանքով և անձնվիրությամբ, հերոսությամբ և արիությամբ, հերոսական գործի նկատմամբ ունեցած անձնուրաց նվիրվածությամբ քաղաքացիական պատերազմի ճակատներում մեզ վարակում էին հավատով դեպի հեղափոխության ուժը և հրամանատարներին ու մարտիկներին վոգևորում էին պայքարի ու հաղթանակի համար»։ Սերգոյին հաճախ անվանում էին կուսակցության խիղճը և իր ամբողջ կյանքում նա իսկապես բոլշևիկյան, լենինյան-ստալինյան դատակարգականության, կուսակցականության և անհաշտության մարմնացումն էր։

Կուսակցության թշնամիների դեմ մղվող մարտերում Սերգոն չեր խնայում մեկ իր ուժերը և մեկ էլ իր կյանքը։ Ահա մեր Սերգոյի կրծքի տակ գտարեց բարեխելուց մեծ արիությունն, պրոլետարականը, ազիտատորի, կոմունիստի հաղթանակների կազմակերպչի սիրտը։ Մարդկային պատմության հայտնի տարրներից ամենատար դավաճաններն են դավաճանության, որոնք չատրամ Սերգոյի պես սիրտը, չկատեցին ընկեր Որջոնիկիձեի ուժերը։ Այդ արատավորից ճակատագրական վախճանը, որ Սերգոյից շատ տարիների կյանք խլեց։ Ընկեր Մոլոտովը կարմիր հրապարակում արտասանած իր յերեկվա ճառում ասաց.

«Մեր ժողովրդի և բոլոր աշխատավորների թշնամիները, ֆաշիզմի արտակիստական վիժվածքները և այլ տար յերեկվա-

նիներըը,—վորոնց դավանանական աշխատանքն ի սպաս և դրված շուտափույթ կործանման դատապարտված բուրժուազիային, այնպես սուբ և մեզ բոլորիս հասկանալի ապրումներ առաջացրեց ընկեր Որջոնիկիձեյի մոտ,—պատասխանատու չեն այն բանի համար, վոր մեծապես արագացրին մեր Սերգոյի մահը։

Ընկեր Որջոնիկիձեն չեր սպասում, վոր Գյասակոմիները, վորոնց այնպիսի հնարավորություններ էին տրվել, կարող են դլորվել այդչափ ցած, դլորվել հակահեղափոխության այդպիսի կեղտոտ խավար փոսը։ Մենք գիտենք, ինչպես պետք է պատասխանել դրան...»։

Լռեց ընկեր Որջոնիկիձեյի սիրտը։ Մենք այլևս չենք տեսնի հոգևոր գեղեցկությամբ լի այդ կերպարանքը, չենք տեսնի նրա համակիչ ժպիտը, չենք լսի նրա ձայնը։ Սակայն ճշմարիտ և նրա լավագույն տաներից մեկը՝ Ալեքսեյ Տոտիանովը, վոր յերեկ մեխենգում Լենինի դամբարանի տրիբունից ասաց.—«Սերգոյի նման մարդիկ չեն մեռնում։ Նա հավիտյան կապրի ժողովրդի սրտում»։

Նա հավիտյան կապրի սոցիալիզմի ստեղծագործության տներում... Սերգոն հավիտյան կապրի ամենուրեք, վորտեղ ներթափանցել են նրա սրտի բոցի կայծերը, նրա ստեղծագործական յեռանդի մասնիկները։ Այն անդուլ յեռանդը, վորը մարմնավորվել է Տոտիանովի և տոտիանովականների մեջ, շարունակում է և կշարունակի շարժել պատմության անիվը դեպի կոմունիզմի լիակատար հաղթանակը։ Կարմիր հրապարակում, կրեմլի պատի մոտով, վորը պահպանում է Սերգոյի աճյունը, ժողովրդական ոտներին անդադար անցնում են և կանցնեն միլիոնավոր բանվորներ, վորոնցից յուրաքանչյուրի մեջ դրված է Սերգոյի մարի ու սրտի մի մասնիկը։

Կարմիր հրապարակով—նոր աշխարհի հաղթանակների հրապարակով—սուրում են ավտոմոբիլները, դղրդում են տանկերը, հրապարակի վերևում սավառնում են հարյուրավոր ինքնաթիռներ,—և յուրաքանչյուր մոտոի մեջ, ինքնաթիռի յուրաքանչյուր թևում դրված է Սերգո Որջոնիկիձեյի ստեղծագործական հանճարի մասնիկը։ Իսկ Կարմիր հրապարակից այն կողմ, սոցիալիզմի մայրաքաղաքի և մյուս քաղաքների ու գործարանային ավանների փողոցներում վեր են խոյացած պրոլետարական մեծ հեղափոխականի հազարավոր հուշարձանները։ Գործարանների, էլեկտրոկայանների, դոմնաների, ակումբների, բնակելի տների

վիճակի դանդաղումները յուրքի վրա, անոգին նավերը ծովերի և ովկիանոսների ուղղություն և առաջխա խորությունների, ինքնաթիռների յուրացումները յուրհնակամարում, մեր կարմիր բանակի գնդացիրներն ու առնկերը, կոլտնտեսային դաշտերի տրակտորներն ու կոմբայնները—խորհրդային հողի այդ ամբողջ բազմազանությունը մեծության մեջ հավիտյանս կենդանի կմնա ընկեր Սերգոյի առյուծի սիրտը։

Տարիներ ու հարյուրամյակներ կանցնեն, բայց չեն ադոտանան, այլ ավելի ու ավելի պայծառ կվառվեն Սերգոյի — պրոլետարական մեծ հեղափոխականի, կոմունիզմի անվեհեր ասպետի, մարդկության վերածնման առաքելության դարաշրջանի լավագույն մարդկանցից մեկի—անունն ու փառքը։

(«ՊՐԱՎԴԱ»-ի փետրվարի 22-ի առաջնորդող)

ԳՐԻԳՈՐԻ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻՉ (ՍԵՐԳՈ) ՈՐՋՈՆԻԿԻԶԵ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր կուսակցությանը, մեծ սոցիալիստական հայրենիքի՝ ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգին ու աշխատավորներին, ամբողջ աշխարհի աշխատավորներին մեծ վիշտ և պատեր։ Չկա այլևս Սերգո Որջոնիկիձեն, բոցավառ, անվեհեր լենինյան բոլշևիկը, միլիոնավորների սիրած դեկավարը, Լենինի ու Ստալինի գինակիցը, Համամիութենական Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Քաղբյուրոյի անդամը, հաղթական սոցիալիստական արշավի ամենաառաջանդավոր կազմակերպիչը, Շաներ Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարը։

Այդ բյուրեղային անաղարտ, անհողդողդ բոլշևիկ հեղափոխականի կյանքն օրինակ է սոցիալիզմի համար և իրենց ազատագրման համար մարտնչող ամբողջ աշխարհի աշխատավորներին։ Խորհրդային ժողովրդի սիրելի Սերգո Որջոնիկիձեն պատանի հասակից իր սիրտը, միտքը, ուժերը, անսպառ յեռանդը, իրեն ամբողջապես, իր ամբողջ կյանքը նվիրաբերել էր բանվոր դասակարգի գործին, կոմունիզմի գործին։ Նրա ամբողջ կյանքն անցավ կուսակցության աչքի առջև, բանվոր դասակարգի աչքի առջև, Լենինի ու Ստալինի, Համ կ(բ)կ կենտկոմի դեկավարության ներքո։

* * *

Գրիգորի կոնստանտինովիչ Որջոնիկիձեն (կուռակցական մականունը Սերգո) ծնվել է 1886 թվականի հոկտեմբերի 28-ին (նոր տոմարով), Արևմտյան Վրաստանում, Գորնշա գյուղում։

Սերգոյի հայրն ուներ ընդամենը մի քանի դեսյատին ուժից ընկած հող։ Յեգիպատացորենը, ել չենք խոսում մյուս բաների մասին, ընտանիքին բավականացնում եր միայն մի քանի ամիս։ Հայրն ստիպված եր լինում պաշտային աշխատանքների միջև ընկած ժամանակամիջոցում աշխատելու գնալ Ջիաթուրի, որտեղ նա մանգանի հանքափար եր փորձում։ Սերգոյի մայրը ծննդաբերությունից կարճ ժամանակ հետո մահանում է։ Յերեք ամսական յերեխային իր խնամքին է վերցնում հորաքույրը, որը կերակրում է նրան և փոխարինում հարազատ մորը։

Յոթ տարեկանից Որջոնիկիձեին տալիս են Գորնշայի յեկեղեցական-ծխական դպրոցը, որն ավարտելուց հետո նա ընդունվում է Քաշուրիի յերկաթուղային դպրոցը։ Մեկ տարուց հետո, ընտանիքի ծշվառ դրության հետևանքով, նա ստիպված է լինում թողնել դպրոցը և վերադառնալ գյուղ։ Նույն տղգանուն ունեցող ժողովրդական ուսուցիչ Սիմոն Որջոնիկիձեն Սերգոյին իր հետ տանում է Ծոբի ավանը, որտեղ նա դպրոցի վարիչ եր։ Այնտեղից նրանք փոխադրվում են Լանչխուտի և վերջապես Ծորագուլի։ 1898 թվականին Սերգոն ավարտում է Ծորագուլիի յերկդասյան դպրոցը։

1900 թվականի աշնանը Սերգոյի հորեղբոր որդի Տարասի Որջոնիկիձեն և ազգականներից մեկը՝ Պավել Մանավարիանին նրան տանում են Թբիլիսի (Թիֆլիս)։ Այնտեղ նա սովորում է քաղաքային (Միխայլովսկի) հիմնադանդացին կից ֆելդշերական դպրոցում։

Ֆելդշերական դպրոցում սովորում էին գերազանցապես ժողովրդի տարբեր խավերից յելած ծնողներ։ Ուսանողության մեջ կային ուժեղ հեղափոխական տրամադրություններ։ Կազմակերպվում էին տղխալ-դեմոկրատական խմբակներ, որոնցից մեկի մեջ մտնում է նաև Սերգո Որջոնիկիձեն։ 1901—1902 թվականներին նա արդեն ժամանակցում եր դպրոցական տղխալ-դեմոկրատական խմբակին։

1903 թվականին Սերգոն մտնում է ՌՍԴԲԿ-ի շարքերը, որպես բոլշևիկ։ Սերգոյի ամբողջ հերոսական, հոյակապ կյանքն ընթացել և կուռակցության, բանվոր դասակարգի աչքերի առջև, Լենինի ու Ստալինի, Համ. Կ (բ) Կ Կենտրոնական Կոմիտեի ղեկավարությամբ։

Գիմնազիական դպրոցն ավարտելուց հետո, 1905 թվականի գարնանը Որջոնիկիձեն վերադառնում է Աբհազիան Վլասովոն, մանդատորական հաֆտումի։ Նա ամենաակտիվ մասնակցություն է ունենում կուսակցական աշխատանքին։ Նա պրոպագանդիստ է և ագիտատոր։ Նա միտինգների և դեմոնստրացիաների կազմակերպիչ է մինչևիվնների դեմ։ Սերգո Որջոնիկիձեն իր բոլշևիկյան գործունեության մեջ ոգեշնչում էր ընկեր Ստալինի «Հարևանցիորեն կուսակցական տարաձայնությունների մասին» բրոշյուրից, որը գրվել է 1905 թվականի սկզբներին։

1905 թվականի աշնանամուտին Որջոնիկիձեն փոխադրվում է Գուդաուտա (Աբխազիա)։ Այստեղ նա տեղական հեղափոխական կազմակերպության աշխատում է մեծ ջանասիրությամբ։ Այդտեղ նա պրոպագանդում էր մարքսիզմը, որը համար կյանքի իմաստը միայն հեղափոխության մեջ էր։ Տասնինն տարեկան Սերգոն արդեն Գուդաուտայի կուսակցական կազմակերպության ընդհանուրի կողմից ճանաչված գործավար էր, կուսակցության Սուխումի պրոպագանդիստ կոմիտեի անդամ, ընդհատակյա աշխատանքի տարածման կազմակերպիչ և կրակոտ ագիտատոր։

Երբ 1905 թվականի հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստը լուրը հասնում է Գուդաուտա, Սերգո Որջոնիկիձեն մեծ ցնծությամբ է կազմակերպում քաղաքի կենտրոնում։ Այդ միտինգում նա ունկնդիրների ուշադրությունը պարզաբանում է, որ միայն ցարի տապալումը և ինքնակալության վոչնչացումը կարող են իսկական ազատություն տալ։ Վասիլիևանությունն այն ժամանակ չհամարձակվեց ձերբակալել երիտասարդ բոլշևիկ ագիտատորին։

Երիտասարդ հեղափոխականի աստղին ձերբակալություններ տեղի չեն ունենում Գուդաուտայի մոտ գտնվող Բոմբորի գյուղում, 1906 թվականի հունվարի 5-ին։ Սերգոն ձերբակալվում է գնդերը բեռնաթափելու ժամանակ և բանտարկվում Սուխումի բանտում, որտեղ մնում է մինչև 1906 թվականի հունիսի 7-ը։ Այնուհետև յերաշխավորությամբ բաց է թողնվում և գնում է Թբիլիսի։ Այստեղ առաջին անգամ, բոլշևիկյան «Դրո» («Ժամանակ») թերթի խմբագրատանը հանդիպում է ընկեր Ստալինին, որն այդ թերթի խմբագիրն էր։

1906 թվականի ապրիլին Որջոնիկիձեն, թաղնվելով պահեստրդական բաժնից, մեկնում է արտասահման՝ Բելգիա։ Շուտով նա վերադառնում է Ռուսաստան։ 1907 թվականի մարտին մըտ-

նում և Բագվի բոլշևիկյան կոմիտեի մեջ, որը գլխավորում էր ընկեր Ստալինը, ու որի կազմի մեջ մտնում էին նաև Շահումյանը, Ջապարիձեն, Սպանդարյանը։

Բագվի ժամանակաշրջանը խոշորագույն մի ուղենիշ է հանդիսանում Որջոնիկիձեի՝ որպես բոլշևիկյան կուսակցության ակտիվավոր գործչի կազմավորման գործում։ Բագվի նավթահանքերը գալու առաջին իսկ օրվանից նա հակայականն անբ և վայելում բանվորների մեջ, որոնց կազմը ծայրահեղորեն բազմազան էր։ Այստեղ կային թուրքեր, ռուսներ, վրացիներ, հայեր։ Որջոնիկիձեն կարողանում է ընդհանուր լեզու գտնել շահագործվող ազգությունների այդ ամբողջ բազմացեղ մասսայի հետ, կարողանում է նրանց համախմբել բոլշևիկների լոզունգների շուրջը։ Բագվում, լինելով Բալախանիի շրջանի Ռոմանիի կուսակցական կազմակերպիչ, նա յուրացնում է երթալով նախապատրաստվում և 1907 թվականի մայիսի մեկի մասսայական բանվորական ցույցին, ակտիվ մասնակցում է 3-րդ Գևառական դումայի ընտրական կամպանիային, յուրացնում է երթալով մերկացնում և մենշևիկներին, պաշտպանում, նոյնպես։

1907 թվականի նոյեմբերին Սերգո Որջոնիկիձեն ձերբակալվում է վոսոխիանության կողմից և նետվում Բայիլովի բանտը։ 1908 թվականի ապրիլի 9-ին Թրիլիսիի զաոտասանական պալատի հատուկ ատյանն Որջոնիկիձեին զաոտապարտում է բոլոր իրավունքներից զրկման և ցմահ աքսորի՝ Սիբիր։ Հոկտեմբերի 27-ին, նույն այդ Թրիլիսիի զաոտասանական պալատի հատուկ ատյանը Աբխազիայում կատարած հեղափոխական աշխատանքի համար նրան լրացուցիչ երթալով զաոտապարտում է բնակավայրեր մեկ տարի ժամանակով։

1909 թվականի գարնանն Որջոնիկիձեին աքսորում են Սիբիր։ Աքսորավայրը նշանակված էր Ցենիսեյի նահանգի Պինչուգյան վոլոստի Գաոտակույ գյուղը։ Աքսորավայրը հասնելուց յերկու ամիս հետո Որջոնիկիձեն փախչում է և վերադառնում Բագու, անընդհատ պայմաններում շարունակելու համար կուսակցական աշխատանքը։

1909 թվականի աշնանը բոլշևիկների Բագվի կազմակերպությունն Որջոնիկիձեին ուղարկում է Իրան (Պարսկաստան), Թիլյանի նահանգը, որտեղ այն ժամանակ հեղափոխական շարժման խաոերարեի էր։ Այնտեղ նա ակտիվ մասնակցում է հեղափոխական պայքարին։

1910 թվականի նոյեմբերին Սերգոն վերադառնում է Բաքու և այդտեղից մեկնում Փարիզ, Լենինի մոտ։

Ն. Կ. Կրուպսկայան իր հիշողություններում գրում է. «... Մի անգամ բարձրանում եմ և տեսնում. «Յակով և ինչ-որ մի մարդ, ով մի բառ ֆրանսերեն չի խոսում, յերևի ձեզ մոտ է յեկել»։ Յես ցած իջա, կանդնած եր կովկասյան տեսքով մի մարդ և ժպտում եր։ Պարզվեց, որ դա Սերգոն եր։ Այն ժամանակվանից սկսած նա դարձավ ամենամոտիկ ընկերներից մեկը»։

Փարիզից վոչ հեռու, Լոնժյումոյում, Լենինը 1911 թվականին առնձնում է կուսակցական դպրոց, որի ունկնդիրները հավաքագրված եյին Ռուսաստանում, տեղական կուսակցական կազմակերպությունների կողմից։ Այդ դպրոցում ավորում եր նաև Որջոնիկիձեն։

Շուտով Որջոնիկիձեն ստիպված է լինում ընդհատել ուսումը։ Նա նորից ուղարկվում է Ռուսաստան, Լենինի ամենապատասխանատու մի հանձնարարությամբ, այն է՝ աշխատանք կատարել համառուսական կուսակցական կոնֆերանսի նախապատրաստման ու հրավիրման ուղղությամբ։ Ընդյուծ ռևակցիայի ճնշման տակ գտնվող յերկրում աշխատելու բացառիկ դժվարին պայմաններին, Որջոնիկիձեին հաջողվում է վայրկյան կերպով իրագործել Լենինի առաջադրանքը։ Որջոնիկիձեն յեկել է Պրագայի կոնֆերանսի պատգամավոր՝ Թրիլիսիի բոլշևիկյան կազմակերպության կողմից։

Պրագայի կոնֆերանսում Որջոնիկիձեն ընտրվում է Կենտկոմի անդամ։ Կենտկոմի 7 անդամներից 5-ը պետք և աշխատեին Ռուսաստանում։ Ստեղծվում է ընկերներ Ստալինից, Որջոնիկիձեից և Սպանդարյանից կազմված Կենտկոմի բյուրո՝ Ռուսաստանում աշխատանքը ղեկավարելու համար։

Կենտկոմի վորոշմամբ Որջոնիկիձեին հանձնարարվում է կոնֆերանսի մասին զեկուցում տալ Պետերբուրգի կուսակցական կազմակերպության համար։ 1912 թվականի վերջերին Սերգո Որջոնիկիձեն մեկնում է Պետերբուրգ, այնուհետև գնում է Վոլոգդայի նահանգը, այնտեղ աքսորի մեջ գտնվող ընկեր Ստալինի մոտ։ Ընկեր Ստալինի հետ միասին, վորը փախչում է աքսորավայրից, նա գնում է Բաքու, իսկ այնուհետև Թրիլիսի։ Թրիլիսիում Սերգոն կուսակցական կազմակերպության համար զեկուցում է կարդում Պրագայի կոնֆերանսի մասին։

1912 թվականի ապրիլին Սերգո Որջոնիկիձեն նորից ուղևորվում է Պետերբուրգ։ 1912 թվականի ապրիլի 27-ին նա նորից ձերբակալվում է։ Վեցամսյա նախնական բանտարկությունից հետո, Պետերբուրգի շրջանային դատարանը Սերգո Որջոնիկիձեին աքսորից վախչելու և բոլշևիկյան աշխատանքի համար դատապարտում է յերեք տարվա տաժանակիր աշխատանքի, վորից հետո ուղարկելով ցմահ աքսորի։

1912 թվականի հոկտեմբերին Որջոնիկիձեն շղթայակապ վոխադրվում է Շլիսելբուրգի բերդը։

Յերեքամյա բանտարկությունը բերդում անցկացնելուց հետո, Սերգո Որջոնիկիձեն 1915 թվականի սեպտեմբերին նոսպով ուղարկվում է Արևելյան Սիբիր, Ալեքսանդրովսկի աքսորական բանտը (Իրկուտսկի մոտ)։ Այնտեղ նա մնում է մինչև Լենա գետի վրայով նավագնացության բացվելը և 1916 թվականի գարնանն ուղարկվում է աքսորավայրը՝ Վիլյույսկի հոռանավոր շրջանի Նյուրբինսկի գյուղական համայնքը։ Սակայն Յակուտսկից, հիվանդանոցային բժշկի խնդրով, վորը բժշկական աշխատողների կարիք ուներ, Սերգո Որջոնիկիձեին ուղարկում են Պոկրովսկոյե գյուղը, Յակուտսկից 90 կիլոմետր հեռավորության վրա, վորպես հիվանդանոցի բուժակ։

Աքսորում Որջոնիկիձեն կրքոտ պայքար է մղում ժննդևիկնների, եսերների ու անարխիստների դեմ, մերկացնելով իմպերիալիստական պատերազմը պաշտպանելու նրանց դավաճանական քաղաքականությունը։

Փետրվարյան հեղափոխության հաղթանակի ժամին Սերգո Որջոնիկիձեն իմանում է հեռավոր ուլուսներում հիվանդներին այցելելու համար կատարած շրջագայության ժամանակ։ Նրա ուրախությունն անսահման էր։

Համարյա ութը տարի Սերգո Որջոնիկիձեն զերի չի մնում ցարիզմի ձեռքում—բանտերում, Շլիսելբուրգի բերդում, հոսպում և աքսորում։ Ցարիզմը տապալված էր։ Որջոնիկիձեն, բոլոր մյուս իսկական լենինյանների նման, այդ հաղթանակը դնահատեց մեկն վորպես պայման՝ անհապաղ հանուն սոցիալիստական հեղափոխության պայքարի անցնելու համար։

Սերգոյին և պատահանում գլխավոր դերերից մեկը Յակուտիայում հեղափոխական նվաճումները ամրապնդելու գործում։ Որջոնիկիձեն մտնում է Յակուտական խորհրդի Գործադիր կոմիտեի կազմի մեջ, ընտրվում է Յակուտսկի մարզի հասարակա-

էան անվտանգության կոմիտեի նախագահության անդամ, կազմակերպչական ու ագիտացիոն մեծ աշխատանք է կատարում։

1917 թվականի մայիսին Սերգո Օրջոնիկիձեն մեկնում է Իրկուտսկ, իսկ այնտեղից՝ Պետրոգրադ և ամբողջապես կլանվում մարտական հեղափոխական աշխատանքով։ Լենինի առաջարկությամբ Սերգո Օրջոնիկիձեն մտցվում է բոլշևիկյան կազմակերպության Պետրոգրադի կոմիտեի կազմի մեջ։

Հոկտեմբերյան օրերին հակահեղափոխության՝ համաձայնողականների—մենշևիկների ու եսէրների ոժանդակության, չեզոքության և վերջնական պրոլետարական հեղափոխության դեմ։ Սկզբում են մասսայական ձերբակալությունները, բոլշևիկյան թերթերի ավերումը։ Բուրժուազիան բացահայտորեն պահանջում էր դատաստան անել Լենինի նկատմամբ։

Գումարվում էր բոլշևիկյան կուսակցության VI համագումարը։ Համագումարի նախապատրաստության ու անցկացման խնդիրները լենինյան դեկավարության ապահովում և ընդհանուր Սառլինը։ Լենինն իր ատազամարտից, իսկ ավելի ուշ՝ Հելսինգֆորսից ուղղություն էր տալիս բոլշևիկների աշխատանքին, դեկավարություններ էր տալիս համագումարի օրակարգում դրված հարցերի վերաբերյալ։ Լենինից դիրեկտիվներ առանալու համար Օրջոնիկիձեն Սառլինի հանձնաժողովության կենտրոնի հետ կապ է պահում և Լենինի մոտ նրա ատազամարտը։

Կուսակցության VI համագումարում ընդհանուր Սառլինն իր քաղաքական դեկուցման մեջ և ապա Օրջոնիկիձեն Լենինի՝ դաշտարանին ներկայանալու հարցի վերաբերյալ ամեն իր հատուկ դեկուցման մեջ ամենախիստ կերպով դեմ են արտահայտվում ներկայանալուն։ «Ներանց համար,— հայտարարում է Սերգո Օրջոնիկիձեն,— կարևոր և հետաքրքրական չափ մեծ թվով առաջնորդներ խլել հեղափոխական կուսակցության շարքերից։ Մենք վոչ մի դեպքում չպետք է տանք ընդհանուր Լենինին»։

1917 թվականի սեպտեմբերի սկզբներին Օրջոնիկիձեն կարճ ժամանակով ուղարկվում է Անդրկովկաս։ Նոյեմբերի 6-ին Օրջոնիկիձեն Անդրկովկասից վերադառնում է Պետրոգրադ և ակտիվ կերպով մասնակցում Հոկտեմբերյան սոցիալիստական հեղաշրջմանը։

1918 թվականի հունվարի 2-ին Օրջոնիկիձեն նշանակվում է Ուկրաինայի շրջանի ժամանակավոր արտակարգ կոմիսար և կարևոր լիազորություններ առանում Խորհրդային Ռուսաստանի

այն բոլոր վայրերին հայց և այլ միջոցներ ժամանակավորելու ուղղությամբ, որոնք պահպանվածների կարիք կլին զգում։

Լենինն-Ստալինի կուսակցության կենտկոմի վճռանությունը վայելող մարդուն արժանի յուրացրով ու արիությամբ նա ոգնում և ուկրաինական աշխատավորներին՝ ամրապնդելու խորհրդային իշխանությունը և կատարելու այն հիմնական խնդիրը, որ այն ժամանակ կանգնած էր նրանց առջև, այն է՝ չերկրի խորքը փոխադրել պահպանվածի պաշարները, նյութական արժեքները, ռազմական հանդերձանքը։

1918 թվականի ապրիլի սկզբներին Որջոնիկիձեն փոխադրվում է Դոն։ Ապրիլի 7-ին նա արդեն Դոնի Ռոստովումն էր։ Այստեղ նա շարունակում է միջոցներ ձեռք առնել վերմանդատյաժականներին ցույց տրվող դիմադրությունը կազմակերպելու ուղղությամբ, որոնք աստիճանաբար շարժվում էին դեպի հարավ, Դոնի և Կուբանի ուղղությամբ։ 1918 թվականի ապրիլի 9-ին բացվում է Դոնի հանրապետության բանվորական, գյուղացիական ու կազակային պատգամավորների խորհուրդների առաջին համագումարը, որին Որջոնիկիձեն ընտրում է Դոնի հանրապետության կենտգործկոմի կազմի մեջ։

Գերմանացիները մոտենում էին Դոնին։ Ապրիլի 29-ին Որջոնիկիձեն Ռոստովում հեռագիր է ստանում Լենինից և Ստալինից։ Լենինը և Ստալինը նրան և Ուկրաինայի պիտված ուժերը հրամանատար Անտոնովին առաջարկում էին վերմանդատյական ճակատում դադարեցնել ռազմական գործողությունները։

Մայիսի 2-ին Որջոնիկիձեն Դոնի հանրապետության կենտգործկոմի չերկու ներկայացուցիչների հետ մեկնում է Ռոստովից և վերմանդատյան հրամանատարության հետ բանակցություններ վարելու՝ պատերազմական գործողությունները դադարեցնելու մասին և Տագանրոգը վերմանդատյինների կողմից գրավվելու վեմ բոլոր հայտնելու համար։ Տագանրոգի գրավումը Բրեստի գաշնագրի պայմաններից էր վերմանդատյինների կողմից, քանի որ Տագանրոգը ՌԽՖՍՀ-ի տերիտորիան էր հանդիսանում։ Արմյանսկայա առանձնյակի մոտ վերմանդատյան պատվիրակությունը ձերբակալում է պատվիրակության, դինամիտի մեծ քանակ և ուղարկում Տագանրոգ։ Սերգո Որջոնիկիձեն խիստ բողոք և հայտնում Բրեստի գաշնագրի պայմանները վերմանդատյինների կողմից խախտվելու և պատվիրակության ձերբակալման վեմ։ Պատվիրակներին վերադարձվում և նրանց դինքը և ապահովվում և նրանց անարգել վերադարձը Ռոստովում։

Մայիսի 7-ին ավստրո-գերմանական զորքերը, գայդամակ-ները և սպիտակ կազակները գրավում են Ռոստովը։ Որջոնիկիձեն իր եշելոններով վերջինն է հեռանում Ռոստովից, նահանջե-լով ակզբում Բաստյակ, իսկ այնուհետև գեպի Տիխորեցկայա, վորպեսզի այնտեղից մարտով առաջ շարժվի գեպի Ցարիցին։

«Դրությունն այստեղ լավ չէ,— 1918 թվականի մայիսի 23-ին Ցարիցինից հեռագրում է Որջոնիկիձեն Լենինին և Ստա-լինին,— հարկավոր են վճռական միջոցներ, իսկ տեղական ըն-կերները չափից դուրս քնքշ են, ոգնությունն ցույց տալու յու-րաքանչյուր ցանկությունն դիտավում և վորպես միջամտության տեղական գործերին։ Կայարանում կանգնած են Մոսկվայի հա-մար հացահատիկ բարձած 6 մարշրուտային գնացք և չեն ու-ղարկվում... Ներից եմ կրկնում, հարկավոր են ամենավճռական միջոցներ։ Ցարիցինի շուրջը մոլեգնում է հակահեղափոխու-թյունը»։

1918 թվականի մայիսի 25-ին պաշտպանության շտաբի պատակարգ նիստում Որջոնիկիձեն հանդես և գալիս Ցարիցինի վրա հարձակվող հակահեղափոխական բանդաներն դեմ պայքար կազմակերպելու պլանով։ Նա առաջարկում և քաղաքում գեղած խորհրդային զորքերը համախմբել մեկ հրամանատարության ներքո։ Ապահովելով քաղաքի իրական պաշտպանությունը, Որ-ջոնիկիձեն շտապում է Կուբան։

Գեպի Կուբան և Զերնոմորյան եյին շարժվում գերմանական զորքերը։ Անհրաժեշտ եր կազմակերպել Կուբանի պաշտպանու-թյունը գերմանացիներից և ամրապնդել գերիտասարդ Կարմիր բանակի հզորությունը։ Մայիսի 28-ին Եկատերինոդարում բաց-վում է Կուբանի և Զերնոմորյան խորհուրդների արտակարգ գեր-զորդ համագումարը։

Որջոնիկիձեն անմիջականորեն դեկավարում է համագումա-րը, մի քանի անգամ գեկույցի ունենում։ Նրա առաջարկությամբ, անջատ-անջատ գոյություն ունեցող Կուբանի խորհրդային հան-րապետությունը և Սև-Ծովյան խորհրդային հանրապետությունը միանում են, կազմելով միասնական Կուբան-Սևծովյան հանրա-պետություն։

1918 թվականի դեկտեմբերին Դենիկինի սպիտակ բանակն ավելի ու ավելի է մոտենում Թերեկի մարզի սահմաններին։ Ինտերվենտների կողմից ոժանդակություն ստանալով, միանալով Կուբանի հակահեղափոխության հետ, նա հարձակվում է XI

Ֆոնդ
3465

Կարմիր բանակի վրա։ XI բանակը, կտրված Մորշրդային Ռուսաստանից, մնում է առանց ռազմերի, առանց վառոդաշեն։ Հանրապետության համար ծանր այդ ժամանակներում Որջոնիկիձեն անցնում է Հյուսիսային Կովկասի մեկ անկյունից մյուսը, ապստամբական մեկ տափաստանի շրջանից մյուսը։

Որջոնիկիձեի գնդումով XI բանակը պետք է կենտրոնացնար Վլադիկավկազում և Գրոզնիում. Թերեքի հանրապետությունը պետք է պաշտպաներ. կոմունիստները մնում են իրենց տեղերում։ Նրանց գլխին, ասպետի նման, կանգնած է Որջոնիկիձեն։ Բայց տիֆից հյուծված բանակն սկսում է քայքայվել։

Հունվարի 24-ին Որջոնիկիձեն Լենինին ուղարկած իր հեռագրում հաղորդում է՝

—«Ռազմ և վառոդաշեն չկա։ Փող չկա... Վնաս ամեն և, որ պատերազմ ենք մղում, վառոդաշեն ենք դնում հնարավոր ուրբյուղ։ Վլադիմիր Իլյիչ, հաղորդելով Ձեզ այդ (մանրամասնությունը փոստով), համոզված եմ, որ մենք բոլորս էլ կկրչենք անհամատար կռվում, բայց մեր պատիվը չենք զրպարտվի վախեցած... Գրոզնու և Վլադիկավկազի բանվորներին մենք անհոգդող վստահում ենք՝ մարտնչել և չհեռանալ։ Լեռնցի ժողովուրդների համակրանքը մեր կողմն է։

Բանակցին Վլադիմիր Իլյիչ, մանացու վտանգի պահին, վողջունն ենք հղում Ձեզ և ապատում ենք Ձեր ոգնության Որջոնիկիձեն»։

Հունվարի վերջերին դնդիկինյան դրոշատակերը մոտենում Վլադիկավկազին։ Բաղաքում կար ընդամենը մի քանի հազար մարտիկ։ Սկսվեցին արյունահեղ կռիվները։ Բանվորական դասմարտականները, կարմիր բանակի ջոկատները 7 որ անդադար պաշտպանում էին քաղաքը՝ վրա ավել սպիտակ բանդանների։ Ձորս որ հազիվանանոցներն կռվում էին ինքնաշեները։ Որջոնիկիձեն իր շտաբով փոխադրվեց ինքնաշեների մոտ՝ Բաղրիկինո, վերակոչի անմիջականորեն դնդավարեց մարտերը։ Ճակատն անցնում էր 150 քայլ հեռավորության վրա այնտեղից, որտեղ անդավորել էր Որջոնիկիձեն իր շտաբը։

Սակայն ուժը սպիտակների կողմն էր և պետք չեղավ Վլադիկավկազը թողնել։ Կոմունիստների Վլադիկավկազի խումբը, ընկնելը Որջոնիկիձեի գլխավորության տակ, վերջից ազատվել սարեր խորքերը։

Մինչեյն 1919 թվականի հունիսի սկզբներին, Որջոնիկիձե-

ՀԱՅԿ ԱՍՏ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՄԱԿԱՆԱՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ձևն, Ենիսեյսկից և Դուդինկի վրայով, անվնաս կերպով անցավ Թրիլիսի։

Դա այն միակ ուղին էր, որով Որջոնիկիձեն կարող էր Մոսկվա ընկնել, չնչին նրան հաջողվեր անցնել հակահեղափոխական Անդրկովկասից և կասպից ծովից, որտեղ սերտ էին անգլիացիք։

Սերգո Որջոնիկիձեն, Թրիլիսիի բոլշևիկներին հետ միասին, ուրվագծեց հակահեղափոխական ստեղծիկյան կառավարության դեմ հետագա պայքարի ուղիները։ Որջոնիկիձեի գալուստ կապակցությամբ, Բագվում նշանակվեց անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների կուսակցական լայն խորհրդակցություն։

Խորհրդակցությունից հետո, Որջոնիկիձեն Մոսկվա ուղևորվեց այն ժամանակ միակ հնարավոր, բայց արտասովոր ուղիով՝ ձկնորսական առագաստանավով, Կասպից ծովով։ 1919 թվականի հուլիսին Որջոնիկիձեն նշանակվեց Արևմտյան հակաառ XVI բանակի Հեղափոխական-Ռազմական Խորհրդի անդամ։

Հակառակորդն արշավում էր Բելոռեուտիայի մայրաքաղաք Մինսկի վրա։ Շատ դժվար էր պարզել հակառակ տերող խուճապի վիճակը, որովհետև կարմիր բանակի ցիրուցան դրոստաների հետախուզությունները հակառական տեղեկություններ էին տալիս հակառակորդի դադարեցման մասին։ Ահա, մի մութ գիշեր, Որջոնիկիձեն, Բորիսովի գավառական հեղկոմի անդամների և մի տասնյակ կարմիր բանակայինների հետ միասին, հրացանը ձեռին, վառոդով, հետախուզման է գնում դեպի Բորիսով։ Հետախուզները թափանցում են ապխատակ լեհերի խոր թիկունքը, հասնելով համարյա Բորիսովի արվարձանը, պարզում են հակառակորդի ուժերի թիվը, նրա դիրքերը։ Ետկու որից Բորիսովը գրավվեց կարմիր բանակի զորամասերի կողմից։

Որջոնիկիձեն Արևմտյան հակառակ ինազ ժոռ չերնի ամիս 1919 թ. հոկտեմբերին կուսակցությունը և կառավարությունը նրան նետեցին հակառակ՝ Դենիկինի դեմ։

Նա նշանակվեց XIV բանակի Հեղափոխական-Ռազմական Խորհրդի անդամ։ Նա ընկավ Ստալինի կարգադրությամբ, Արևմտյան հակառակ Հարավային հակառակ տարավ Լատիշյան դիվիզիան։ Անհրաժեշտ էր վճռական ընկում տանիծել հակառակ։

Հոկտեմբերի 20-ին հարվածող խմբակը (Լատիշյան դիվիզիայի 3-րդ բրիգադը, 9-րդ և հատուկան դիվիզիաների զորա-

մասերը) կռվով պրավեցին Ռոյոլը։ Այդ զորամասերին դիմավորում էր Որջոնիկիձեն։

1920 թ. փետրվարի սկզբներին, Համ. Կ(բ)Կ կենտկոմի վորոշմամբ առնջվում է Հյուսիսային Կովկասում խորհրդային իշխանությունը վերականգնելու հատուկ բյուրո։ Բյուրոյի նախագահ է նշանակվում Սերգո Որջոնիկիձեն։

Ապրիլի 27-ից 28-ի գիշերն Ապրենյանում տապալվեց մուսավաթական կառավարությունը։ Կազմված Ապրենյանի հեղկոմը հրավիրեց Կարմիր Բանակը։ Ապրիլի 28-ին, ցերեկվա ժամի 4-ին, կարմիր հեծելոնները մտան պրովինտարական Բաքուն։ Ապրիլի 30-ին Որջոնիկիձեն, Կիրովի և Լեվանդովսկու հետ միասին, մտավ անդրկովկասյան բոլշևիզմի ազատագրված միջնարերդը։ Խորհրդային Ապրենյանի համար մղվող այդ պայքարում Որջոնիկիձեի կատարած դերը հսկայական էր, բայց սպառիչ կերպով գնահատել և ընկնել Ստալինը 1936 թ. հունվարի 20-ին, Ապրենյանի պատվիրակությանը կրեմլում ընդունելիս։ Ընկներ Ստալինն Որջոնիկիձեի ամբիոն բարձրանալը վողջունել և հետևյալ խոսքերով՝

«Վողջույն Ապրենյանի ազատարարին։ Նա առաջինը մտավ Ապրենյան»։

1921 թ. փետրվարի 25-ին վրացական մայրաքաղաքը խորհրդային դարձավ։ Որջոնիկիձեի կոմիսար Լեվանդին և Ստալինին ուղարկված հեռագիրն ասում է՝

«Թիֆլիսի վրա ծածանվում է խորհրդային իշխանության կարմիր դրոշը։ Կեցցե Խորհրդային Վրաստանը»։

Այն որերին, յերբ Որջոնիկիձեն վերջնական հարված էր հասցնում Վրաստանի հակահեղափոխությանը, Ռ.Կ(բ)Կ X համագումարը, վորի նիստերը տևել էին ուշնուշով Մոսկվայում, նրան իր բացակայությամբ ընտրեց Ռ.Կ(բ)Կ կենտկոմի անդամ։

Համառուսական կենտորգբյուրոյի նախագահությունն իր 1921 թվականի մայիսի 19-ի վորոշմամբ Սերգո Որջոնիկիձեին պարգևատրեց մարտական կարմիր դրոշի շքանշանով։

Սերգո Որջոնիկիձեն ամենաարդյունավետ պայմաններում պետք է կոնտակտավորեր խորհրդային իշխանությունն Անդրկովկասում։ Պետք էր սկսել կուսակցական կազմակերպության ամրացումից, պրոլետարական ինտերնացիոնալիզմի վոգով տոգորել նրա աշխատանքը։ Խորհրդային իշխանության դրոշի տակ միացած Անդրկովկասում Որջոնիկիձեն ծավալեց կուսակցական խոշորա-

գուշ կազմակերպչի և բոլշևիկյան կուսակցության պնդավարի իր ընդունակություններր։

1921 թ. նոյեմբերի 2-ին Ռ-կ(բ)Կ կենտկոմի Կովկասյան Բյուրոն, որի նախագիծը տեղի էր ունենում Բագվում մասնակցությամբ Բագվի ու Ադրբեջանի պնդավար կուսակցական որգանների անդամների և Վրաստանի ու Հայաստանի կոմկուսների կենտրոնական կոմիտեների անդամների, որոշում ընդունեց Անդրկովկասի Միութենական Հանրապետությունների մասին։

1922 թ. հունվարի 23-ին բացվեց Վրաստանի կոմունիստական կուսակցության առաջին լսկալ համագումարը։ Որջոնիկիձեի պնդավարությունն ապահովեց լենինյան-առաջնյան գծի հաղթանակը համագումարում։

Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների շուրջ (1922 թ. փետրվարի 18-22-ին) տեղի ունեցած առաջին համագումարը, որտեղ Որջոնիկիձեն հանդես եկավ Կովկասյան Բյուրոյի աշխատանքի վերաբերյալ քաղաքական հաշվետվությամբ, մի ցույց եր լենինյան կենտկոմի շուրջը Անդրկովկասի կոմիտեականների հիմնական կորիզի խտական միավորության ու բոլշևիկյան միասնության։

Մարտին-ապրիլին ընկեր Որջոնիկիձեն մասնակցում է Ռ-կ(բ)Կ XI համագումարի աշխատանքին, որտեղ ընտրվում է կենտկոմի անդամ։ Նա կենտրոնական կոմիտեի անդամ է ընտրվում XII, XIII և XIV կուսակցական համագումարներում։

XIV կուսակցական համագումարում Սերգո Որջոնիկիձեն ջախջախիչ հարվածներ է տրծում ապիտիլիզմի պոպամանների ու մասնակիցների Զինովյեվի ու Կամենեվի վրա. XIV համագումարում իր արտասանած ճառում նա անողոքորեն մերկացնում է այսպես կոչված «նոր ոպոզիցիան», որը ոչ մի միջոցից չեր խորշում կուսակցության լենինյան-առաջնյան գիծը պայթեցնելու համար։

XIV համագումարից հետո Որջոնիկիձեն Անդրկովկաս է վերադառնում համենատաբար կարճ ժամանակով։ 1926 թվականի սեպտեմբերի մոտ 20-ին Համ. Կ(բ)Կ կենտկոմը նրան ուղարկեց Հյուսիսային Կովկաս, որտեղ միաժամանակ նա աշխատում եր որպես Համ. Կ(բ)Կ Հյուսիսային Կովկասյան տերիտորիալ առաջին քարտուղար։

1926 թ. նոյեմբերի 3-ին կենտկոմի և կվՀ-ի միացյալ պլենումը Սերգո Օրջոնիկիձեին ընտրում է կենտորոնական վերահսկիչ Հանձնաժողովի նախագահ։ ԽՍՀՄ-ի կենտգործկոմի նախագահության որոշմամբ նա նշանակվում է ԽՍՀՄ-ի բանվոր-գյուղացիական Տեսչության ժողկոմ և ԽՍՀՄ-ի ժողկոմխորհի նախագահի տեղակալ։

Սերգո Օրջոնիկիձեն կվՀ—ԲԳՏ-ն պլեխանովցիների հեղափոխության պարզագույն ամենագժվարին շրջաններից մեկում, այն շրջանում, երբ ծավալվում էր մեր նախապատրաստումը ժողովրդական անտանելի վերակառնելուից անցնելու նրա վերակառուցմանը՝ սոցիալիստական նոր բազայի վրա, այն շրջանում, երբ կազմակերպված սոցիալիստական-պետական բլոկն արդեն անցել էր կուսակցության և խորհրդային իշխանության դեմ պայքարելու բացահայտ հակահեղափոխական մեթոդներից։

Կուսակցության XV համագումարում Օրջոնիկիձեն հանդես գալով կվՀ—ԲԳՏ-ի աշխատանքին նվիրված դեկուցումով, ասում էր՝

«Ոպոզիցիան պնդում էր, որ կվՀ-ն մեզ քաղաքական դեմք չպետք է ունենա, որպես մի վատ խնամախոս, որը պետք է մեկից վազի մյուսին, որպեսզի մի կերպ հաշտեցման հասնի։ Մենք պնդում ենք, որ նախ և առաջ պետք է լինենք բոլշևիկ, լենինյան, և ապա կարող ենք լինել կվՀ-ի անդամ, կենտկոմի, շրջանային կոմիտեի, բջիջի անդամ և այլն։ Մենք պնդում ենք, որ նախ և առաջ պետք է լինել բոլշևիկ, իսկ ոպոզիցիան մեզանից՝ կվՀ-ի անդամներից, պահանջում էր դադարել բոլշևիկ լինելուց»։

Կապիտուլիացած սոցիալիստական-պետական ռեստավրատորների բլոկը չախչախվելուց հետո, շտապով գլուխ բարձրացրեց ոչ ոպոզիցիան, որին գլխավորում էին Բուխարինը, Տոմսկին և Ռիկովը։

Այդ թափթփուկները, կուսակցության դեմ իրենց ծրած պայքարում, միանում էին սոցիալիստներին, խոսք մեկ անելով նրանց հետ՝ բոլոր հակահեղափոխական ուժերը կուսակցության դեմ, կենտկոմի և ընկեր Ստալինի դեմ պայքարելու համար միացնելու մասին։

«Ընկեր Ստալինի դեմ ուղղված պայքարը,—ասում էր Օրջոնիկիձեն կուսակցության XVI համագումարում,—մի պայքար է մեր կուսակցության լենինյան կենտկոմի գլխավոր գծի դեմ։

կուսակցությունը գնաց իր կենտկոմի հետևից։ Կուսակցությունը, հանձին Ստալինի, անմնում է կուսակցության հիմնական գծի անխոնջ պաշտպանին ու վլադիմիր Իլյիչի լավագույն աշակերտին։ Ձեվ այդ պատճառով մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգը միանգամայն ճիշտ կերպով ընկերը Ստալինին նույնացնում են մեր կուսակցության հիմնական գծի հետ, ասելը հաղթանակից հաղթանակ է տանում ՄԱՀՄ-ն...»։

ԲԳՏ-ի ժողովատոը հակայական պայքար ծավալից պնասական ապարատի բյուրոկրատիզմի, անշարժության, ճահճացման ու քաշքշուկի դեմ։

Որջոնիկիձեյի, ասելես ԲԳՏ-ի ժողովի մասնացած գլխավոր ծառայություններից մեկն էր այդ որպանի շրջադարձը դեպի անտառները։ Որջոնիկիձեն ինքը մանրամասնորեն ուսումնասիրում էր արդյունաբերական շինարարության բոլոր հարցերը՝ սկսած հիմնական շինարարություններից ու նոր շինարարությունների յուրացումից մինչև արտադրության բուն պրոցեսի կազմակերպումը՝ նրա բոլոր վճռական ետապներում։

Որջոնիկիձեն անտեսավարներին շարունակ կոչ էր անում՝ բոլշևիկյան կուսակցականությամբ հագեցնել իրենց ամբողջ աշխատանքը, ընդարձակել ինքնաքննադատությունը, դարպացնելով բանվորների մասսայական նախաձեռնությունը։ Նա քանիցս կրկնել է, որ միմիայն այդ պայմաններում կարող են նրանք հաջողությամբ աշխատել և հաղթանակի հասնել։

1930 թ. նոյեմբերի 10-ին Որջոնիկիձեն նշանակվեց ՄԱՀՄ-ի ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի նախագահ։ Համ. կ(բ)կ կենտկոմի ու կՎՀ-ի դեկտեմբերի 17-ից մինչև 21-ը տեղի ունեցած միացյալ պլենումի վորոշմամբ նա մտցվեց Համ. կ(բ)կ կենտկոմի Բյուրոյի կազմի մեջ, վորտես անդամ։

1929—30—31 թվականները հանդիսացան սոցիալիստական նկոնոմիկայի ֆունդամենտի հիմնադրման տարիներ։ Կառուցվում էին Մագնիտկան ու Կուզնեցկը, ավտոդործարանները՝ Գորկում և Մոսկվայում, Ուրալմաշը և Կրամատորսկը, տրակտորային գործարանները Ստալինգրադում, Խարկովում, Չելյաբինսկում, սոցիալիզմի հարյուրավոր ինդուստրիալ բերդեր։

Մեծ պայքար ծավալվեց ծանր արդյունաբերության շինարարության համար։ Սերգո Որջոնիկիձեն գործին կպավ իրեն հատուկ հնդափոխական վոգևորությամբ և բոլշևիկյան յեռան-

դով։ Հարկավոր էր ջախջախել հին տեմպերն, աշխատանքի հին մեթոդներին վարժված շատ աշխատողների համառությունն ու անշարժությունը, հարկավոր էր բոլշևիկորեն ձեռնամուխ լինել կադրերի կազմակերպմանն ու դաստիարակմանը։

Սոցիալիստական արդյունաբերության բանակի հրամանատարը զինավարում էր արդյունաբերությունը ոչ միայն իր մարտական վիշտերից, այլև անմիջականորեն դիրքերում ու համառներում, ցնծերում, շինարարությունների առաջին ճակատամասերում։

Ստալինգրադ, Խարկով, Լենինգրադ, Խարկով, Ստալինո կրամատորսկ, Կամենսկոյե, Դնեպրոպետրովսկ, Զապորժյե, Յենակիյեվո, Մարիուպոլ, Վորոշիլովսկ, Մագնիտոգորսկ, Զլյատինսկ, Ստալինսկ, Գրոզնոյ, Կեմերովո, Նովոսիբիրսկ, Սվերդլովսկ, Նիժնե-Տագիլ, Պերմ, Իրտիշ, Բագու, Կիչկաս, Ուորքիկի, Մակեյեվկա, Լուգանսկ, Կրիվոյ Ռոգ, Բնբնեյնիկի, Սոլիկամսկ,— ահա վոչ լրիվ ցուցակն ինդուստրիալ այն ոջախների, վորոնք քանիցս այցելել և Սերգո Որջոնիկիձեն։

1935 թ. հունվարին, Սերգո Որջոնիկիձեն ծանր արդյունաբերության գրությունն վերաբերյալ հաշվետու զեկուցումով հանդես եկավ Կոմունիստների VII Համամիութենական Համագումարում։ Համագումարում Սերգո Որջոնիկիձեի ասած զեկուցումը սոցիալիզմի ինդուստրիայի իսկական հաղթանակների արտացոլումն էր։

Կոմունիստների VII համագումարը նշանակալից բանաձև ընդունեց՝

«Լսելով և քննարկելով Ծանր արդյունաբերության ժողովրդական կոմիսար ընկեր Գ. Կ. Որջոնիկիձեի զեկուցումը, ՀՍՀՄ Միության Կոմունիստների VII Համագումարը վորոշում է՝

1. Գոհունակ Ծանր արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատի աշխատանքը մինչև ամսյան բավարար։

2. Առաջարկել ՀՍՀՄ Միության կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահությանը՝ քննարկել ծանր արդյունաբերության ամենից ավելի աշքի ընկած աշխատողներին պարգևատրելու հնարավորության հարցը»։

ՀՍՀՄ-ի կենտգործկոմի մարտի 22-ի վորոշման մեջ ասված է՝

«ՀՍՀ Միության Ծանր արդյունաբերության ժողովրդա-

կան Կոմիսարիատի գծով 1934 թ. արտադրական ծրագրի դեբակատարման և արտադրությունը կազմակերպելու ու անխափան աշխատանքը գործում ձեռք բերված հաջողությունների համար, ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն վորոշում է՝

Լենինի շքանշանով պարգևատրել Ծանր արդյունաբերության ժողովրդական կոմիսար ընկեր Գրիգորի Կոնստանտինովիչ Որջոնիկիձեին»։

Ցերկրորդ հնգամյակի տարիներին Սերգո Որջոնիկիձեն անխոնջ կերպով աշխատում է նոր տեխնիկան յուրացնելու, գիտա-հետազոտական աշխատանքը կազմակերպելու, շահարերության, արտադրանքի վորակի, գործարանների համագործակցման, արտադրության կուլտուրայի բարձրացման և նոր կադրերի պատրաստման պրոբլեմները լուծելու վրա։ Նա խորապես ըմբռում է, վոր համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ ազատագրված արտադրողական ուժերը պետք է հսկայական բարիքներ բերեն ժողովրդին։ Իր հետախույզ մտքով նա նորանոր մեթոդներ ու յեղանակներ է վիճառում, թե ինչպես ավելի ու ավելի բարձրացնի արտադրությունը, վորպեսզի յերկիրն ավելի հարստանա, վորպեսզի առավելագույն պայքար տրվի մեր հայրենիքի ծաղկման համար։

Որջոնիկիձեն խոհուն գնահատեց Ստախանովի սկսած գործի մեծ նշանակությունը։ Կուսակցության Դոնեցկի մարզկոմի քարտուղար Սարկիսովի անունով իր ուղարկած հեռագրում նա գրել էր, վոր ածխային Դոնբասի հերոսներ Ստախանովի, Դյուկանովի, Կոնցեդալովի և ուրիշների անկորզնելը հոգս են ցնծացնում ածխահանքի արտադրական նորմաների բոլոր հին պատկերացումները և փայլուն ապացույց են, թե «ինչպիսի հսկայական հնարավորություններ ունենք մենք և վորքան հետ ենք ետևում կյանքից այն պատասխանատվությունները, վորոնք մեր առջև պահանջներ են դնում իրենց վատ աշխատանքը, վատ ղեկավարությունն արդարացնելու համար»։

1936 թ. հունվարին ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն ընկեր Որջոնիկիձեին պարգևատրեց Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով՝ «1935 թ. արտադրական պլանը կերպակատարելու, նոր տեխնիկան յուրացնելու գործում ձեռք բերված հաջողությունների և ստախանովյան շարժման զարգացման մեջ ցուցաբերած նախաձեռնության համար»։

Ընկեր Սերգո Որջոնիկիձեի անվան հետ անմիջականորեն կապված է նաև խորհրդային իրականության մի այլ զարմանալի յերևույթ՝ ինժեներա-տեխնիկական աշխատողների ու անտեսավարների կանանց շարժումը։

1936 թ. հոկտեմբերի 28-ին լրացավ Սերգո Որջոնիկիձեի 50 տարին։ Ամբողջ Խորհրդային յերկիրը տոնում էր այդ հոբելյանը, վորպես համաժողովրդական հանդես։ Խորհրդային Միության ամենատարբեր անկյուններից՝ բանվորներից, ծառայողներից, կոլտնտեսականներից, պիոներների ու տեխնիկայի մարզիկներից, ուսանողներից ու կարմիր բանակայիններից, կուսակցական և վոչ կուսակցական բոլշևիկներից, հազարավոր վողջույններ առացավ իր հետաքրքիր հոբելյանի որը խորհրդային ժողովրդի և բոլշևիկյան կուսակցության սիրելի, խոշորագույն գործավարներից մեկը՝ Սերգո Որջոնիկիձեն։

* * *

Մեր յերկրի աշխատավորները մեծ վշտով են դիմավորում այսօր ընկեր Սերգո Որջոնիկիձեի մահվան բոթը։ Խորհրդային մարդկանցից ում համար թանգ չի այդ անունը։ Ո՞վ չեր ճանաչում այդ անպատրաստ հեղափոխականին, առաքինյան կոփվածքի տեր մարդուն, համակիչ ընկեր և ամրակուռ, փորձված գործավարին, վորը չեր ընկճվում վոչ մի դժվարության առջև, վորը միշտ, իր ամբողջ կյանքում, գլուխը հպարտորեն բարձրացրած առնում էր բոլշևիկի դրոշը։ Նրա համար չկար ավելի բարձր բան, քան իր պարտքը կուսակցության հանդեպ, նրա համար չկար ավելի թանկագին բան, քան մեր հայրենիքի շահերը, պրոլետարական հեղափոխության գործը, կոմունիզմի գործը։

Կուսակցությունը Սերգո Որջոնիկիձեին միշտ հանձնարարել է պաշտպանի ու շինարարության ամենապատասխանատու, վճռական ճակատամասերը, գիտենալով, վոր նա կկարողանա բարձրացնել ու կազմակերպել մասսաներին, հաղթահարել իր շուրջը նվիրված մարտիկներին և հաղթանակի հասնել ամենուրեք. վորտեղ հրապարակ գար Սերգոն՝ ընդհատակյա պայքարի որերին, քաղաքացիական պատերազմի ճակատներում անցի ուղևորված կռիվներին, կուսակցական ու պետական ամենապատասխանատու պատասխանատվության դիրքում—նա իր հետ առնում էր բոլշևիկի բոցավառ հուրը, անդադար կազմակերպչի առնչվարար նախաձեռնությունը և

բոլորին վարակող խանդավառությունն ու պայքարի հզոր պաթոսը: Նրա ղեկավարությամբ անձնվիրաբար աշխատում էին ընդհատակյա հեղափոխականների խմբակները: Նրա ղեկավարությամբ կռվում և հաղթում էին քաջարի Բանակի մարտիկները: Նրա ղեկավարությամբ աշխատավորները հերոսաբար կառուցում էին սոցիալիստական ընդունարիայի հսկաները:

Ջապորոժյեն և Մագնիտոգորսկը, Կրամատորսկն ու Կեմերովոն, Ստալինգրադն ու Նովոսիբիրսկը, Դրոզդնին ու Բևբևնիկին, Սալիկամսկն ու Վորոշիլովսկը, Բագուն ու Լենինգրադը, Սվերդլովսկն ու Մակեևկան, Չելյաբինսկն ու Ստալինսկն, Կրիվոյ Ռոգն ու Պերմը, Մոսկվան ու Խարաբովսկը, շատ ու շատ քաղաքներ և բանվորական ավաններ տեսնում էին ու գիտեին, թե Սերգոն, այդ յերկաթյա ժողկոմը, ովքը ղեկավարում եր իր թափով և բնույթով աշխարհում անհնարինքաց անառնությունը, ինչպես եր կարողանում տեսնել կառուցման ու աշխատանքի ժանրուքները, ինչպես եր կարողանում տեսնել ու գնահատել մեծ ու փոքր աշխատողներին, բոլոր նրանց, ովքեր աշխատում էին հոգուտ մեր հայրենիքի: Սերգո Որջոնիկիձեն բոլշևիկ-ղեկավարի, անբասիր, մաքուր և կայուն կուսակցականի, կուսակցության լենինյան-ստալինյան քաղաքականության անհաշտ մարտիկի տիպարն եր: Կուսակցության գլխավոր գծի համար մղվող պայքարում նա բազմաթիվ ջախջախիչ հարվածներ հասցրեց նրա թշնամիներին: Տրոցկիստ սրիկաները, ֆաշիզմի գործակալները և նրանց գործակիցները ու ձայնակիցները՝ աջ թափթփուկները ատում էին Սերգո Որջոնիկիձեին—Համ. կ(բ)ի և Խորհրդային Միության առաջնորդներից մեկին, կուսակցությանը և հայրենիքին նրա անձնուրաց նվիրվածության համար, նրա խորհրդային բոցավառ հայրենասիրության համար, նրա անհաշտության համար բոլոր նրանց նկատմամբ, ովքեր գործով կամ խոսքով փորձում էին ճնշել սոցիալիզմին:

Սերգոյի անձնուրաց, հերոսական, անձնվեր պայքարը կուսակցության գծի համար, Պրոլետարական հեղափոխության հաղթանակի համար, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման համար, համաշխարհային հեղափոխության հաղթանակի համար, նրա պատկերը խորհրդային յերկրի և ամբողջ աշխարհի բոլոր աշխատավորներին կվոգեշնչեն նոր խիզախությունների, հետագա պայքարի՝ հանուն կոմունիզմի գաղափարների հաղթանակի:

ԽՍՀՄ-ի աշխատավորներն իրենց սիրելի բարեկամի, ըն-

կերոջ ու դեկավարի — Սերգո Որջոնիկիձեի գաղափարն առաջ կերդվեն եւ ավելի անձնուրացորեն եւ նվիրվածորեն պայքարել սոցիալիզմի գործի համար, որին նա նվիրեց եւ ողնց իր արյունչվի, հերոսական, խիզախությամբ եւ արիությամբ լի կյանքը։

ԳՐԻԳՈՐԻ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻՉ ՈՐՋՈՆԻԿԻՁԵՅԻ

ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՍԳՈ ՆԻՍՏԸ

ԸՆԿԵՐ Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ ՃԱՌԸ

Համկ(բ)Ի կենտրոնական Կոմիտեյի եւ ՀԱՍՀ Միությյան
Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից

Ընկերներ. մենք կորցրինք բոլշևիկյան կուսակցության ու խորհրդային պետության լավագույն դեկավարներից մեկին, կոմունիզմի գործի բոցաշունչ ու անվեհեր մարտիկ, զգայուն, սիրելի, բացառիկ կերպով արտակից ընկեր Սերգո Որջոնիկիձեյին։ Այդպիսին նա մեզ համար, նրա մոտիկ ընկերներիս ու բարեկամներիս համար և Խորհրդային Միության բանվորների ու գյուղացիների լայն մասսաների համար, նաև վոչ միայն մեր յերկրի աշխատավորների համար։ Սերգո Որջոնիկիձեյի անունը մոտիկ և ու Քանդ բոլոր աշխատավորների համար, անխզելիորեն կապված է մեր յերկրի բանվոր դասակարգի ամբողջ պայծառ ազատագրական պայքարի հետ և կմնալ սոցիալիզմի պատմության մեջ՝ պրոլետարական հեղափոխականների ամենահերոսական անուններից շարքում։

Վրաց գյուղացու աշխատավորական ընտանիքից յելած ընկեր Որջոնիկիձեն իր գիտակից կյանքի առաջին տարիներից իրեն նվիրեց յարիշմի կեղեքիչ իշխանությունից և կալվածատերերի ու կապիտալիստների ճնշումից գյուղացիների ու բանվորների ազատագրման գործին։ Այդ նրան գեռ պատանի հասակից բերեց բոլշևիկների շարքերը։

Սերգո Որջոնիկիձեն բոլշևիկ դարձավ, հենց վոր մեծ Լենինը բարձրացրեց բոլշևիկյան դրոշը։ Ցնվ դրանից հետո իր ամբողջ կյանքի ընթացքում նա յեղել է Լենինի-Ստալինի կուսակցության հավատարիմ զավակը, այդ կուսակցության անդուլ

կառուցողը, նրա բազմաթիվ հաջողությունների ու աշխատավորության հեղափոխական պայքարի հաղթանակների բոլշևիկյան կազմակերպիչը։

Թեև չի ցնծել նրա կյանքը։ Վորպես խիստ գործնական հեղափոխական, վորը 15 տարի պայքարել և կռմունիստի դրծի համար դեռևս ցարական ինքնակալության ահռելի պայմաններում, նա առաջ էր ընթանում դաժան անպրեսխանների կարկուտի տակ։ Այդ ժամանակի համարյա կեսը նա անթողած և յեղել անցկացնել հետևյալ աքսորում, բանտում, տաժանակրության մեջ։ Հեղափոխական պայքարի այդ բոլոր փորձությունների միջով, վորոնք շատ ուժ են խլել նրանից, նա անցավ դրանք բարձր պահած, աշխատավորության հաղթանակի նկատմամբ անսասան հավատով, բոլշևիզմի դրոշի տակ։

Յերբ յեկավ այն ժամանակը, վոր բոլշևիկյան կուսակցությունը պետք և վերջնականապես ձևավորվեր և վերջնականապես ազատագրվեր մենշևիկյան ուղեկիցներից, ընկեր Որջոնիկիձեն դարձավ Պրոպագի հանճարավոր կենդերատնակ հիմնական կազմակերպիչներից մեկը, մի կենդերատոր, վորը պատրաստ կատարեց այդ խնդիրը։ Նա հպարտանում էր և լիակատար իրավունք ուներ հպարտանալու, վոր կուսակցության շինարարության ուղղությամբ կատարած իր ամբողջ հիանալի աշխատանքն ընթացել և Լենինի ու Ստալինի անմիջական ղեկավարության տակ։

Հեղափոխության տարիներին մենք նրան ճանաչում ենք վորպես Կարմիր Բանակի ու քաղաքացիական պատերազմում այդ բանակի տարած բազմաթիվ, պատմական հաղթանակների անդուլ, խոշորագույն կազմակերպիչ, Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների՝ բոլորի կողմից ճանաչված կառուցող և Անդրկովկասում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասում, ազգային խաղաղության պլխավոր կերտող, սոցիալիստական շինարարության ու նրա վայելուն հաջողությունների ամենատարողունակ ղեկավար։

Կարմիր Բանակի կազմակերպման առաջին օրերից ընկեր Սերգոն յեղել և նրա շարքերում։ Քաղաքացիական պատերազմի մի շարք վճռական ճակատներում նա կարմիր Բանակը ղեկավարում և առնում և դեպի պատմական հաղթանակներ։ Ձեվ այդպես, ամբողջ քաղաքացիական պատերազմի ընթացքում, մինչև վոր խորհրդային իշխանությունը լիակատար հաղթանակ տարավ ռազմական-գավարդիական բանդաններին և առաջնորդ ինտերվենտ-

ներն բանակներին հետամուտ։ Սերգո Օրջոնիկիձեի անունն ամենից ավելի ժողովրդականություն վայելող անուններից մեկն է և կարծիք հանդուգն և այդպես էլ կլինա ընդմիշտ։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նա վերադարձավ Կովկաս,—վորտեղ սկսել էր իր հեղափոխական աշխատանքը և կազմակերպվել վորպես բոլշևիկ,—իրրև բոլոր տեսակի ազգայնականի՝ մուսավաթականի, մենշևիկյան, դաշնակցականի պատահական կառավարողներից այդ ելրկիրն ազատագրող, կառավարողներ, վորոնք ծառայում էին իրենց բուրժուազիայինն և հարստահարում ելրկիրն ու իրենց պատիվը վաճառում տարբերկրյա բուրժուազիայինն։ Նա այդտեղ դրեց խորհրդային հասարակարգի հիմքը և ազգային կուլտուրաների իսկական վերելքի սկիզբը։ Այդտեղ նա վերջնականապես կազմակերպվեց վորպես ամբողջ Հարավրդային Միության և մեր ամբողջ բոլշևիկյան կուսակցության խոշորագույն գործիչ։

«Այդ ամանները շինված են լավ մաղած բաց-կարմրագույն կավից և արտաքին կողմը պատած է կարմիր ներկով, որի վրա ևս գունով դուրս են բերված վոչ մշտական ուղիղ կնքիչափական ձևեր»[2]։

Հայաստանի գունազարդ կնքամիկայի մի այլ գյուտ մասին էլ տեղեկանում ենք Սալիչևի «Անդրկովկասյան մի քանի դամբարաններ» աշխատությունից։ Այդ աշխատության մեջ նա հաղորդում է, որ 1895 թ. վոսին Զաքարյան՝ Գետերբուրգի ճարտարած յեղել Ղարս-Ախալքալաք գյուղի շրջակայքի դամբարաններից պեղած մի քանի գունազարդ ամաններ։ Այդ ամանները հետևյալներն են. «մի դավաթ՝ կարմիր կավից, կոկ արտաքինով, ցանցաձև, ատամնաձև և վոլորակաձև արտամետով։ Դարձյալ նույն տիպի 4 դավիթ և մի գավ՝ լայն անկյուններից կազմված արտամետով, որոնց ստոր ծայրերը դեպի ներքև են ուղղված։

---

[1] *Пиотровский и Гюзальян*, Крепости... стр. 51.

[2] *Захаров*, Хетская керамика из Богазкея и некоторые закавказские параллели, стр. 151.

Բոլոր այդ գավեթը և կճուճներները պատկանում են մի առանձին կուլտուրայի»[1]։ Այնուհետև նա շարունակում է. «կարմիր կավից շինած կճուճն ունի հարթ և ան պրնամենա՝ կոնցենտրիկ անկյուններով և ցանցակերպ քառակուսիներով ոճածև դծերով»։

Մինչ քաղաքացիական դուռնատարդ կերամիկա չի հայտնաբերել Ն. Յա. Մառը 1893 թվին Վառնակի պեմբրանում[2]։

Ինձ հետս եմ ստանանշել նաև Ալինջ (Կուռայք) և Վառաքաշեն (Մեկոյան շրջ.) գյուղերում հայտնաբերված դուռնատարդ կերամիկան։ Այստեղ ամանների բաց-դեղնավուն ֆոնի վրա քաշված են կարմիր գոլեր։ Ավելորդ չի լինի նշել, որ Վառաքաշենի և Ալինջի ամանները հայտնաբերվել են մոչ թե ամբողջական վիճակում, այլ կատրանքներով, որ ստիպեցրեց բնաբոշ և բնակատեղի և մոչ թե գամբարանի համար։ Անհրաժեշտ և հետաքրքրել հիշյալ հնավայրերը, որովհետև կարող և պատահել, որ այնտեղ գտնվի դուռնատարդ կերամիկա ունեցող բնակատեղի։

Ինձ թվում և, որ կերամիկայի այդ տեսակին կարելի յ տեղադրել նաև դրսից կարմիր ներկով ծածկած շեկ կամ կարմրավուն կավից շինած կերամիկան, որ հաճախ կարմիր ներկով ծածկված և լինում մոչ թե ամբողջությամբ, այլ միայն վերին մասով, ինչպես այդ նկատվում և Թալադանի կերամիկայի մեջ։

Այդպիսի մի աման ևս գտնվեց Մոխրաննաձոր-Քափաքի տապալին (*) շերտում՝ դուռնատարդ կերամիկայի հետ միասին։ Հայտնաբերվել և նաև Եղյուռում, Ճիշտ և, շատ քիչ քանակությամբ։ Ակադ. Մեշչանինովի 1931 թվի եքսպեդիցիան պետքի յերևույթ հավաքել և այդ կերամիկան նաև Քոդայի ձոր բնակատեղում։

Ակադ. Մեշչանինովը կարմիր-վառքի մասին գրած հոդվածներից մեկում ասում և.

«Ազրբեջանի դուռնատարդ կերամիկան... շատ հարուստ կերպով հանդես և գալիս Նախիջևանի հնադրապետության այլ վայրերում ևս։ Դուռնատարդ կերամիկան հենց Ազրբեջանի սահմաններում մի քանի փուլեր և անցել և ձևափոխվել և տեղում։ Նա ստացել ունեցել և մի քանի հատկանշական հատկություններ կերկրական կյանք»[3]։

---

[1] Изв. Имп. Арх. Ком., вып. 29.

[2] *Пасёк и Латынин.* „Очерк до-истории Сев. Азербайджана". Изв. Общ. и изуч. Азерб. вып. 3—140.

[3] *Мещанинов.* „Доисторическая крашенная керамика Китая", стр. 277. Изв. Общ. и изуч. Азер., вып. 5.

Այդ գունազարդ կերամիկայի յերկարակեցությունն և նըշում նաև Բոգայեվսկին իր „Раковина в крашенной керамике Китая, Крита и Триполья" հոդվածում։ Նա ամբողջ կերամիկան բաժանում է յերկու «դասերի», վորոնք ընդհանուր առմամբ հանդիսանում են յերկարատև զարգացման արդյունք, վորի շնորհիվ էլ «գունազարդ կերամիկան կարելի յե բաժանել յերկու նախնական—վաղ, միջին և ուշ»։ Այնուհետև նա ավելացնում է, վոր այդ զարգացումն ընթացել է վոչ թե «ինչ-վոր խիստ ուղղագիծ պատմական փոփոխման ճանապարհով... շատ հաճախ գունազարդ կերամիկայի տարբեր առանձնահատկությունները... յինում են միատեղ, ինչպես կրետեյում... վոր ապացույց է այս կամ այն տիպի հատարակության և նրա նյութական կուլտուրայի յերկարատև զարգացման» (էջ 69)։

Ընդհ. Բոգայեվսկու ասածն ընդհանրապես գունազարդ կերամիկայի մասին է ընդհ. Մեշչանինովի ասածն Ազրբեջանի գունազարդ կերամիկայի մասին, ի հարկե, նույն չափով կարելի յե կիրառել նաև Հայաստանի կերամիկայի նկատմամբ։

Այդ ժամանակ ավելի հատկանշալի կդառնա այն բազմատեսակությունը, վորը նկատում ենք նույնիսկ ու կերամիկայի հետ համեմատած տարատիպ դյուտերի մեջ, ինչպես մեզանում, այնպես էլ Ազրբեջանում։

Բոլոր այդ դյուտերը մատնանշ են անում այն, վոր գունազարդ կերամիկայի «կուլտուրան» մեկուսացած չի յեղել մեզանում, այլ նա հանդիսանում է տեղական և այն էլ բավական տարածված «կուլտուրա»։

Այդ «կուլտուրան» մեզանում հայտնի յե վոչ միայն զամբարաններից, այլև «բերդ-շեններից» տիպի բնակատեղերից։ Այդ «կուլտուրան» տարածված և յեղել Հայաստանի արևմտյան սահմանի ամբողջ ուղղությամբ, սկսած հյուսիսից մինչև հարավ։

Վո՞ր դարաշրջանին վերագրել այդ «կուլտուրան»։

Առաջ բերված անատոլիականները մատնանշ են անում այն, վոր նա ամենից շատ համապատասխանում է—քան պատերի շարվածքի և քան ևս կերամիկայի—1-ին և 2-րդ խմբերին պատկանող բերդ-շեններին, այսինքն այն բնակատեղերին, վորոնք դադարել են ունենալ խալխլերի՝ Անդրկովկաս մանելուց առաջ։ Բայց դրա հետ միասին, այդ «կուլտուրան» կապվում է նաև Շրեշ-բլրի, Գյուլ-Թափայի և Եյլաղի կուլտուրաների հետ։ Դրանց միմյանց հետ կապում է պլաստիկական վոսկեհատի

(Ղըզլ-Քամուրի կամ Ազ-Քամուրի) մասերիայը, որը աշխարհագրականորեն հարում է Երեշ-բլրին։

Վոսկեհատում, բացի գունագարդ կերամիկայից, գտնվել են նաև ժամացույցի կաղապարներ, որոնք հարազատորեն վերարտադրում են Եյլարի կերամիկայի գծերը։

Եյլարի այդ նյութը գնահատվել է 1931 թ. ակադ. Մեշչանինովի եքսպեդիցիան՝ Հայաստանում կատարած աշխատանքների միջոցին։ Այստեղ գտել էին նուշկափսի բարձրաքիվ ուղղաձիգ վայրէն և (կոկած) կլոր՝ «Եյլարյան» ունկեր։

Անշուշտ, քանի որ Վոսկեհատում պեղումներ չեն կատարվել, ուստի և հնարավոր է, որ գունագարդ և Երեշ-բլուրյան տիպի կերամիկան այստեղ տարբեր շերտերի մեջ հանդես գան, այսինքն նրանք ժամանակակից չլինեն միմյանց։ Սակայն, այստեղ կարևորն այն է, որ Վոսկեհատում, ըստ երևույթին, գտնվում է Հայաստանի գունագարդ կերամիկա ունեցող յերբորդ բնակատեղը, որովհետև Վոսկեհատին համանման դյուտերը Մուխաննաթ-Քափայում, պեղումների ժամանակ, ամէն գունագարդ կերամիկա ունեցող բնակատեղ։ Այսպիսով, Վոսկեհատի նշանակությունը Հայաստանի հնագույն կուլտուրական շերտագրության վորոշելու համար պրավիլու յի առաջնակարգ տեղերից մեկը։ Վոսկեհատը պեղելու դեպքում, նա կարող է հանդիսանալ մի տեսակ բանալի՝ վորոշելու համար այդ շերտագրությունները։

Մուխաննաթ-Քափայի նյութերի մեջ կա մի քանի կտորտանք «Եյլարյան» կերամիկա։ Սրանից, ինձ թվում է, կարող ենք հանել հետևյալ յեզրակացությունը։ Յեկեն Երեշ-բլրում և Եյլարում հայտնաբերվում է բացառապես միատիպ ան վայրէն կերամիկա, իսկ Մուխաննաթ-Քափայի կերամիկայի մեջ հիմնականը գունագարդն է և նրա կողքին չնչին քանակությամբ հայտնաբերվեց նաև ան վայրէն կերամիկա, ապա այդ նշանակում է, վոր մենք Մուխաննաթ-Քափայի «կուլտուրան» կարող ենք համարել ավելի յերիտասարդ, քան Եյլարինը։ Իր հերթին, Վոսկեհատի կուլտուրայում յեկեն միևնույն շերտի մեջ լինեն գունագարդ և Երեշ-բլուրյան տիպի ան վայրէն կերամիկա, այդ դեպքում, ժամանակագրականորեն նա կհանդիսանա Մուխաննաթ-Քափայի «կուլտուրայի» նախորդը և Երեշ-բլրի կուլտուրայի ավարտողը։

Անհրաժեշտ է նշել նաև հետևյալ փաստը։

Անհնարին է Տեր-Հակոբյանի ասելով, նա Երեշ-բլուրի դաշտ և լեռներ նաև դռնատարդ կերամիկա։ Այս փաստն ավելի ևս հաստատում է նախապես մեր հայտնած միտքը Երեշ-բլրի և դռնատարդ կերամիկայի «կուլտուրաների» ակնհայտ կապի և ժամանակագրական նույնության հարցերի հաշվի առնելու մասին։

Նման մի այլ փաստ ևս կա։ Այդ այն է, որ Ն. Յա. Մառի՝ Վանակում կատարած պեղումների միջոցին դռնատարդ կերամիկայի հետ միասին հայտնաբերվել էր նաև Երեշ-բլուրյան սեպագիր կերամիկա։ Այսանդ, բացի այն, որ թ հայտ և գալիս յերկու կուլտուրաների կապը, կարևոր է նաև այն, որ այդ պեղումների ժամանակ Երեշ-բլրի սեպագիրն պատկանող կերամիկան հայտնաբերվում է դամբարանի մեջ, իսկ այդ նշանակում է, որ Երեշ-բլրի «կուլտուրան» ունի այնպիսի դամբարաններ, որոնք տարբերվում են ևս դռնատարդ կերամիկա ունեցող դամբարաններից և ևս «բրոնզի վերջին» նախագրին պատկանող սև կերամիկայի ծանոթ դամբարաններից։

Հաշտասանի դռնատարդ կերամիկայի, Երեշ-բլրի և յերկաթի դարի սկզբին պատկանող դամբարանների «կուլտուրաների» կապը հաստատվում է նաև հետևյալ փաստերով։

Ինչպես ասացինք, 1936 թվի գարնանը Նոր Արտամիրում պեղվել էր դռնատարդ կերամիկայի մի գերեզմանոց։ Պեղվել էր նա մի քառանկյուն բնակարանում, որի անկյուններում կային փայտե (?) սյուների յերկար խարխափներ, որոնք շատ են հիշեցնում 1928 թվին Եղյարում կատարած պեղումների միջոցին յերևան յեկած խարխափները։ Այնտեղ գտնվեցին յերկու խարխափներ՝ նույնպես քառանկյուն, առանց շաղախի բնակարանի անկյուններում։ Այդ բնակարանը կառուցված էր այն կուլտուրական շերտի վրա, որը ապրիս և ապեցիֆիկ սև փայլ և կլոր ունկեր ունեցող կերամիկա։

Հետաքրքիր է, որ բնակարանների անկյուններում սյուների կանգնեցնելու սովորությունը մինչև այժմ գոյություն ունի Հայաստանի մի քանի շրջաններում։

Բերենք մի այլ փաստ ևս։ Նոր-Բայազետի գավառում Լալայանի կատարած պեղումներից ունենք բոլորովին յերանահատուկ ձև ունեցող մի գավ, որը համարյա ևս կիսագնդի ձև ունի, բայց յերկու կողքերից ճնշած է ներս, որի շնորհիվ ճնշման տեղերում ամանը ներսի կողմից դուրս են յերկու յելուստներ։ Այդպիսի ամաններ ունենք նաև Կարմիր-վանքից և Գյուլ-

Թափոցից։ Ձևի այդչափ տարբերությունը, որ ըստ էության չէր փոխվում ընդհանուր հատակագծի պահպանման, դարձյալ նշում է այդ կուլտուրաների հաղորդակցությունը։

Սակայն, Մուխաննաթ-Թափասում գտնված կերամիկայի հոդքին հանդիպում ենք նաև մեծ չափով բերվածքի սկզբնավորության (խալդական) գործընթացին պատկանող դեմքարանների հետ կապ ունեցող ամանների։ Այդ նշանակում է, որ Մուխաննաթ-Թափասինը հին և այդ բերդ-շինների, այսինքն նրան կարելի է վերագրել մոտավորապես XVIII—XV դարերին մեր թվականությունից առաջ։

Վերևում ասացի, որ Հայաստանի գտնված կերամիկայի «կուլտուրան» նմանություններ ունի բերկրազնի այլ վայրերի նման «կուլտուրաների»։

Ամենից շատ նա նմանվում է մեր ամենամոտ Թուրքմանի, Անաուի կուլտուրային։

Այդ նմանությունն է նշում նաև ակադեմիկոս Մեշչանինովը, երբ դարերի-վանքի կերամիկայի մասին գրում է. «Հարցը հեռվից է գրված և նրան ուղիղ ընթացք տալու համար անհրաժեշտ է հաշվի առնել ազգակից առանձնապես անհանգամանքները։ Այդ բանի համար այդպիսի մի վայր է հանդիսանում Աշխարուն իր Անաույան գտնված կերամիկայով[1]։

Անաուում գտնվել է թե միագույն և թե բազմագույն գտնված կերամիկա։ Ճիշտ այնպես, ինչպես Հայաստանում գտնված գործերում կատարվել է միագույնը՝ սևով կարմիր ֆոնի վրա, իսկ բազմագույնը՝ կարմրով և սևով շիկագույն և դեղնավուն ֆոնի վրա։ Որնամենտը գեներալ ընդհանրություններ և, ինչպես և Հայաստանինը։ Կա նաև սպրեյային կարմրով պատած անգույն կերամիկա։ Այնտեղ բնակատեղը Մուխաննաթ-Թափան նման գտնվում է բոլոր կողմերից մաշված բլուրների վրա։ Մասին շերտերում գտնվել են ապրիչներ, սանդի գարկիչ քարեր, իլիկի գլխիկներ, ծանրաքարեր, ընտանի կենդանիների ոսկորներ։ Այնտեղ գտնվել են նաև հայկական արձագաթերից շինած նետեր։

Այսպիսով, կարելի է ասել, որ Անաու II-ի սերտ կոմ-

---

[1] *Мещанинов* и *В. В. Зуммер*, Новая книга об Анау. Изв. Общ. и Изуч. Азерб., № 5, 1928, стр. 279.

պլեքսը նույն ապավորությունն է գործում, ինչ վոր Մուխանաթ-Քափայի I-ը։

Հայաստանին առնմանատիպ մյուս կետը, վորտեղ գտնադարդ կերամիկա չի գտնվել, հանդիսանում է խեթական Բողազքեյը և Սակչե-գյոզի բլուրը։ Ա. Ա. Զախարովը իր «Хетская культура из Богаз-кея и некоторые закавказские параллели»[1] հոդվածում ասում է. «Կարմիր-վանքից հանած անոթների մեջ ունենք Բողազ-քեյի կճուճների անալոգիկ ձևեր։ Չեր կարելի այդ յերկու հնավայրերի կերամիկայի ընդհանուր լինելը չընդունել, թե՛ ըստ կերամիկայի և թե՛ ըստ արտաննատացիայի»։

«Սակչե-գյոզի բլրի վրա բացված խեթական կուլտուրան իր շերտերի կազմվածքով, բովանդակությամբ և իր թափով հաճախ հիշեցնում է Անաուի կուլտուրան»[2]։

«Այդ անոթների (խեթական—Յե. Բ.) նմանները հայտնաբերվել են Յերևանի նահանգում, Արամալիի մոտ գտածոներում, վորոնք այժմ գտնվում են Լուվրում։ Նրանց հետ ըստ ձևի և արտաննատի համեմատելի չի Շուշի ուշ ժամանակների կավամիկան»[3]։

Յերրորդ հնավայրը, վորտեղ գտնվել և Հայաստանի գունազարդ կերամիկայի նմանը, դա Իրանն է՝ «Թևլլ» բլուրի վրա բացված իր ուշագրավ Շուշան կուլտուրայով։ Այստեղ, 1908 թվին, հայտնաբերվեցին բերդապարսպով շրջապատված քաղաքի հետքեր և նրա մոտակայքում մոտ 1000 դամբարաններ, վորոնք իրենց գունազարդ սկահակներով և մի շարք պղնձե առարկաներով ժամանակակից էին այդ քաղաքատեղին։

«Վոճի տեսակետից ելամական արվեստի հուշարձաններն ազգակից են Իրանի, Թուրքեստանի, Հայաստանի, Կապադովկիայի, Սիրիայի, Պաղեստինի, Աորեստանի և Բաբելոնի հուշարձաններին»[4]։

Ելամի հուշարձանների մեջ կենտրոնական տեղ է գրավում գունազարդ կերամիկան, վորը ժամանակագրականորեն բաժանվում է յերկու մեծ խմբերի հաջորդող տեսակների։ Առաջին տեսակի կերամիկան շինված է պրիմիտիվ դուրգնի վրա, լավ

---

[1] Изв. Общ. и Изучен. Азербайджана, № 5, стр. 151.

[2] *Кобранов*, „Историческое и культурное значение Анау", Туркменгиз, 1927 г.

[3] *Захаров* Хетская культура из Богаз-кея, стр. 152.

[4] БСЭ, Эламское искусство.

ժողած շնկ կավից և ունենում է բաց ֆոնի վրա յերկրաչափական ու կենդանական որնամենտներ՝ սև փայլուն նախշերով։ Յերկրորդ տեսակի կերամիկայի վրա խառնած սև ներկի հետ միասին գործադրվել է նաև կարմիրը։ Կենդանիների նկարները այստեղ ավելի քիչ են վոճավորված։

Հայտնի յե նաև Եգեյան կամ Կրետո-Միքենյան դունագարդ կերամիկան։

Այդ կուլտուրան ունի չորս հիմնական շերտացում։ Առաջինում՝ Վաղմինոսյան շրջանն է։ Այստեղ առաջանում է շատ հատարակ և միագույն յերկրաչափական որնամենտ ունեցող անոթը։ Հաջորդ շերտում առաջանում է բազմագույն կերամիկան և, վերջապես, վերջին շերտերում առաջ է գալիս «Կամարես» վոճի կերամիկան, յերբ սև ֆոնի վրա արվում է կարմիր, նարնջագույն և սպիտակ որնամենտ։

Այդ կուլտուրայի՝ ուրիշների հետ ունեցած նմանության մասին պրոֆ. Զախարովը գրում է. «Մենք կարծում ենք, վոր Եգեյան շրջանը, հաթիերի յերկիրը, Անդրկովկասը և այնտեղից հյուսիս՝ կազմում են մի շրջան»[1]։

Դունագարդ կերամիկան ծանոթ է նաև Ուկրաինայում, Տրիպոլյան շրջանում, Բեսարաբիայում։ Պատրենում արիպոլյան կուլտուրան հանդես է գալիս իր յուրահատուկ կավածեփ (глинобитный) ուղղանկյուն հրապարակիկներով։ Այստեղի իրային մնացորդներից ուշադրության արժանի յին կավակերտ որնամենտած ամաններըը, վորոնք ան, կարմիր և մուգ-դարչնագույն գույներով զարդարված են գնդին և դարչնագույն վողորկ ֆոնի վրա։

Պատրենում գտնվել են նմանապես ամաններ, վորոնք դուրսի վրա չեն շինված և իրենց յուրահատուկ որնամենտով հիշեցնում են Կրետո-Միքենյան կերամիկան։

Այդ յերկու յերկրների կերամիկան՝ ըստ ժանապահների, իր անալոգիան ունի և՛ Իրանում, և՛ Թուրքեստանում, այսինքն՝ Շուշում և Անաուում։

Անդրեանի՝ Զինասատանում պեղած, այսպես կոչված, «Յանշաոյի» կուլտուրան, իր առաջին յերկու շերտերում ունի ազոբիքներ, վոսկրե հերուններ, իլիկի կամ գլխիկներ, քարե գործիքներ և յերկրաչափական սև որնամենտ ունեցող դունագարդ

---

[1] *Захаров*, „Малая Азия и Эгейский мир", стр. 34.

կերամիկա, որն իր պատրաստման տեխնիկայով ավելի կատարելագործված է, քան յնվրոպական դունատարդ կերամիկան, որովհետև նրան ծանոթ է նաև դուրգնը։

Ձեռքբազդի այլ հնավայրերից, որտեղ հայտնաբերվել է դունատարդ կերամիկա, կարելի է նշել նաև Ձեղիպատը, որտեղ 1899 թվին Ջլինդեր-Պետրին Արխոտում պեղումներ հայտնաբերեց դունատարդ կերամիկա, որը նա վերագրում է նախադինաստյան թագավորների ժամանակներին և առաջին պետականությանը։

Դունատարդ կերամիկա գտնվել է նաև Արդիլիայում, Թեսալիայում, Պաղեստինում, Բազանիայում և այլ հնավայրերում։

Սակայն, միայն դունատարդ կերամիկան չէ, որ միացնում է բոլոր այդ կուլտուրաները։

Ուսումնասիրողները աշխատանքներից յերևում է, որ իրարին այլ ձեռագործները ևս, ինչպես արհեստ՝ քարե ապրանքները, մոմերի ծակիչները, յերկաթի և պղնձե գործերը՝ մեծ մասամբ համանման են։

Այդ կուլտուրաները, իրր թե, միանում են նաև դունատարդ արձանիկներով, որոնցից հայտնաբերվել են Տրիպոլյեում, Եգիպտոս կուլտուրայում, Շուշում, Անաուում և Կարմիր-վանքում։

Այսպես ուրեմն, մենք նշեցինք, որ Հայաստանի դունատարդ կերամիկան անդրսովն կապված է անդրկովկասյան կուլտուրայի հետ և հանդիպանում է նրա կուլտուրայի անբաժանելի շրջանակներից մեկը։ Այնուհետև ցույց տվինք, որ դունատարդ կերամիկան գտնվել է Կարմիր-վանքում հայտնաբերվելուց հետո նաև Հայաստանի մի շարք այլ վայրերում։ Վերջապես, մենք բերինք պեղումների տված մի շարք տվյալներ, որոնք «այդ կերամիկայի ներմուծման մասին մեզ միայն հարևան յերկրների հետ առնչության կերամիկայի, այլև հնագույն Արևմուտքի և հնագույն Արևելքի կերամիկայի հետ»։

Այժմ անդրադառնանք, թե բուժողական պիտակներն ինչով են բացատրում «կուլտուրաները» այդ ճանապարհներով։

Իրրև որոշակի վերցնենք Անաուի կուլտուրան ուսումնասիրող հնագետ Կերրանովին։ Վերջինս, իր „Историческое и культурное значение Анау“ գրքի մեջ գրում է, որ կուլտուրաների «ճանապարհները կարող է առաջ գալ յերեք պատճառներից. նախ՝ առևտրատրծող ապրանքն հոգևոր-

նուէյան մշտանականութեան շնորհիվ, յերկրորդ՝ ռասայական նուէյնութեան վրա հենուած ցեղակցութեան և համանմանութեան շնորհիվ և յերրորդ՝ տնտեսարարչութեան և առևտրական կապերի շնորհիվ։

Սակայն, այդ յիրեք պատճառներից նախընտրում է յերկրորդը, այսինքն ֆաշխատական ռասայական թնորիան, համաթելով, որ «կան ծանրակշիռ փաստեր սումերացիների կուլտուրայի առաջնութեան մասին...որովհետև սումերացիք յեկել էին Արևելքից»[1]։ Անաուէի, Շոշի և Տրիպոլիէի համանմանութիւնները նա ուղղակի բացատրում է «կլորագանգ նոմադ հովիւներից» Անաուէից դեպի Միջագետք, Արևմտեան Յեվրոպա, Անդրկովկաս և Յեվրոպա-ասիական տափաստանները գաղթելով։ Այսպիսով նա Անաուէն հնագոյն բնակիչներին համարում է գունագարդ կերամիկայի առնդհատործողներ։

Նոյն հակապիտական-ֆաշխատական ուղղութեանը հետևելով՝ Սաֆարովն էլ հողվածներից մեկում ձգտում է գտնել այն կենտրոնը, որը մոտիկ էլ ամրողջ աշխարհին ուղարկել է գունագարդ կերամիկայի կուլտուրական ալիքները։

Պրոֆ. Ֆոն-Շտերնը հատատառն կերպով կանդնած է միջագետեան տեսութեան վրա։ Նրա ընդարձակ դատողութիւնները հանգում են այն բանին, որ «Տրիպոլիէի բնակիչները հնդեվրոպական ժողովուրդներից հարկադրանքով...կամ լավ հողեր վռնելու համար...շարժվեցին դեպի հարաւ և առնդհեցին Եգեյան կուլտուրան»[2]։

Հետևանք կողմնակից մեկով այդ նոյն միջագետեան տեսութեան, գունագարդ կերամիկայի ծագման խնդիրը լուծում է այլ կերպ. նա համարում է, որ «կրետո-մերթենյան կուլտուրայի ազդեցութիւնը տարածվել էր և հետև. Արևելքում։ Այդ ազդեցութեան բաժանքով հետքերը նկատելին են մինչ միջին արևելքի կողմից, առնդհանումներ յերկրներում՝ Փոքր Ասիայում, Հայաստանում, Անդրկովկասում, Իրանում, այլև այդ ազդեցութիւնը կարելի է գտնել նոյնիսկ Արևելեան Ասիայում»[3]։

---

[1] *Кобранов.* Историческое и культурное значение Анау, 1927 г.

[2] *Фон-Штерн.* Доисторическая греческая культура. Труды XIII археологич. с'езда в Екетеринославе, 1905, т. I.

[3] *Гёрнес.* Культура доисторического прошлого. часть II, стр. 70.

Մի այլ ուսումնասիրող, Շմիդտը՝ իր «Преистория Восточной Азии» աշխատության մեջ, Չինաստանի և Տրիպոլյեի գունազարդ կերամիկայի համեմատության հիման վրա կարծում է, որ Չինաստանի և Ճապոնիայի հնագույն կուլտուրաները յեվրոպական ծագում ունեն, որ նրանց կրողները յեկել են մասամբ հյուսիսային Յեվրոպայից և մասամբ էլ հարավ-արևելյան Յեվրոպայից՝ Դնեպրի, Դանուբի և Բալկաններից մարդկից յեկած գաղթականները[1]:

Արևմուտք-Տիպակը մի ամբողջություն է համարում Աֆանասյի, Միջագետքի, Էլամի, Կարմիր-վանքի, Բևրեֆաստանի, Հինդուստանի և Հյուսիսային Չինաստանի կուլտուրաները:

Այսպիսով, տեսնում ենք, որ բուրժուական հնագետները հարցը լուծում են միգրացիոն տեսությամբ:

Այդ, տեսնենք թե նրանց հետևությունները որքանով հիմնավոր են:

Այդ կուլտուրաների ուսումնասիրության ժամանակ աչքի յե զարնում նրանց մեծագույն մասի պատատական բնույթը: Այսպես որինակ՝ Միքենյան հորիզոր գտածոների մասին Հյոռնեսը գրում է.

«Իրենց հարուստ կարասիով նրանք շատ են վերապահում այն ամենը, ինչ հայտնաբերվել է Յեվրոպայի բազավորական գտածոներից՝ թե հնագույն և թե նոր ժամանակներին: Հերիսթայլին արևելյան ճոխությունն և քանկարժեք մետաղն, առանձնապես վոսկու, առատորեն շատ վառնում»[2]:

Այսպես մենք գործ ունենք «պալատական» բազավորական «կուլտուրայի» հետ: Նույնը պետք է ասել նաև Կրետեյի մասին՝ Կնոսյան և Տեսյան ամրոցներով հանդերձ: Նամանավանդ Տիրինթում բլրի վերին պարսպափակում բացվեց մի պալատ:

Շոշի «կուլտուրան» ևս պալատական եր: Այնտեղ գտնվում քանկարժեք իրեր՝ վոսկուց և արծաթից, ինչպես և փղոսկրից, բացվեց Նարամզինի հաղթական կոթողը և այլն:

Շումերի պեղումները հետևյալ պատկերը բացատրին: Յեգիպտոսի գունազարդ կերամիկան հայտնաբերվեց բազավո-

---

[1] *Пассек.* К вопосу о приеме сравнения в истории материальной культуры. Сборн. посвящен. к 45 лет. Н. Я. Марр.

[2] *Գերնես, անդ, եջ 24.*

բական դամբարաններում։ Բոդոգ-քեյում ևս բացվեց պալատ՝ «հնագույն քաղաքակրթական ամրոց». Տրոյայի 6-րդ քաղաքը, վորտեղ հանդիպում են միքենյան կավե գունագարդ ամաններ։ Այդ քաղաքը հանդիսացել է «հարուստ», ուժեղ տիրողների մայրաքաղաքը»[1]։

Զինատառանի Յանշան կուլտուրայի բնույթի մասին տեղեկություններ չունենք, բայց, ըստ յերևույթին, նա պատկանում է այն եպոխային, յերբ առնմատիրական հասարակություններ դեռևս չեր առանձնացել առնմատան արիստոկրատիան։ Ըստ յերևույթին, նա հասարակ բնակատեղ է յեղել։

Նույնպես և Տրիպոլյինն՝ իր կավածեփ հրապարակներով հանդերձ՝ չենք կարող համարել պալատական կուլտուրա ունեցող հնավայր։

Այսպիսով, կարող ենք նշել, վոր գունագարդ կերամիկա ունեցող մի քանի կուլտուրաներ «պալատական» են, իսկ մյուսները, ինչպես որինակ՝ Յանշան, Տրիպոլյինն և Մոհենջոդարոն՝ հասարակ ժողովրդի սովորական բնակատեղեր։ Այդ պատճառով էլ նրանց ընդհանրություններն ու ազգակցությունը կրեատիվ, Շոշի և Յեղիպտոսի հետ մեծ է և պրոբլեմատիկ։

Այդ կուլտուրաների ավելի խոր վերլուծությամբ կարելի յե նկատել նաև այլ, առավել նյանսային տարբերություններ։

Վերցնենք, թեկուզ որինակի համար, կավե արձանիկները։ Նրանց դյուրը գունագարդ կերամիկայի մի շարք կուլտուրաներում ինքնատիպ վոչինչ չի ասում։ Կանանց արձանիկներ ունենք գեռևս պալեոլիթից։ Նույնպես, նեոլիթում մարդկանց ծանոթ եր գեռևս պալեոլիթի դարաշրջանում։ Ավելի կարևորն այստեղ այն է, վոր մի քանի կուլտուրաներում գտնում ենք կանանց արձանիկներ, իսկ մի քանիսում՝ տղամարդկանց։ Այդ նշանակում է, վոր տարբեր տեղերում մենք տեսնում ենք տարբեր գաղափարախոսություն, վոր առանձնացել է տարբեր սոցիալ-անտեսական կացություններից։ Որինակ՝ Եգեյան աշխարհի հասարակությունը 4-րդ հազարամյակում գտնվում եր զարգացած տիպի տոհմատիրական կարգերի ստադիայում և ուներ բազմաթիվ արհեստավորական խմբակցություններ, վորոնց դեպքի մասը գեռևս կապված եր հողի հետ։ Մայրիշխանության հիման վրա ա՜հռելի մշակվեց իգական սեռի աստվածության իշխանու-

---

[1] Գերոե, անդ, եջ 36.

թյան կրոնը։ Հաջորդ եռապատկ, նախնյան հասարակության տոհմերի միությունն ևս առաջացան մեռելատոհմ ամենամեծ ուժեղ ցեղեր։ Զեռավորվեց տարբեր տոհմերի, միությունների սիրաշահելը, և այդ միությունները հիմնեցին քաղաքակրթության բնակատեղիներ։ Զարգացավ առևտրատնտեսությունը, որի հետևանքով էլ անհրաժեշտություն զգացին հիմնավորվելու նպատակով հաշվեհարդարություն հաստատելու։ Այդ փոփոխությունն անդրադարձավ նաև պատմաբանության վրա, և մենք այդ ժամանակաշրջանում կանանց արձանիկների փոխարեն հանդիպում ենք ազամարդկանց արձանիկների։

Այսպիսով, այստեղ մենք անհնարին ենք գտնում ժողովուրդների հերթափոխության, այլ կուլտուրայի հաջորդական զարգացում։ Բանի որ Անդրկովկասում գտնվել են միևնույն ազամարդկանց արձանիկներ, այդ նշանակում է, որ կուլտուրան գտնվել է, համեմատած Անատոլի, Շոշի և Տրիպոլյեի հետ, զարգացման հաջորդ աստիճանի վրա։ Բայց քանի որ Անդրկովկասում գեռևս չի հաստատվել զարգացման այն հաջորդականությունը, որը քիչ առաջ նշեցինք, ապա այդ կուլտուրաների ընդհանրության մասին առայժմ չի կարելի խոսել։ Զարգացման ընթացքը մեզանում և այնտեղ տարբեր է եղել։ Անդրկովկասի դեռևսորդ կերամիկայի բնույթի մասին ակադ. Մեշչանինովը հետևյալ կարծիքն է հայտնում.

> *«Կավագործության այդչափ զարգացած լինելը նախապատմական Ազրբեջանում, ասելի չէ տալիս կարծելու, որ նրա կրողները ունեցել են վարսավորական կենցաղ... կավանոթները հարմար չեն անդադար տեղաշարժելու համար, նրանք... նույնիսկ քոչասացիկ կյանքին անպետք են։ Հետևապես նրանք բնորոշում են նստակյաց կամ կիսանստակյաց կյանք»*[1]։

Այդ, ինչ ընդունելի չէ Ազրբեջանի համար, նույնը կարելի չէ կիրառել Հայաստանում, հետևաբար և մեր կուլտուրայի սոց.-տնտեսական պայմաններին նույնպես տարբեր են հիշված կուլտուրաններից։

Վերջապես, չի կարելի կավանոթների պատրաստման և

---

[1] *Мещанинов*, „О пользовании этнографическим материалом при археологических работах". Изв. Общ. Обслед. и Изуч. Азерб., т. V, стр. 85.

նկարագրության տարբերությունները նկատի չունենալ։ Տարբեր «կուլտուրաների» մեջ այդ տեխնիկան տարբեր է։ Յեթե Չինաստանի կավանոթները շինված են դարբնի վրա, Շոշի նկատմամբ այդ հարցը վիճելի չէ։ Յեթե Շոշում և Մերձնուում ունենք փայլեցուն արտաքինով, ոչսպես ասած՝ «չնարտակած» կավանոթներ, այդ նույնը չենք կարող ասել մեր Մուխաննաթ-Քափայի և Անաուի մասին։ Մյուս կողմից՝ տարբեր հնավայրերի կավանոթների արտամիտող վերլուծման դեպքում հանդես է գալիս այնպիսի զանազանակերպություն, որ այդ կուլտուրաների միասնության մասին խոսելը կլիներ մի այնպիսի բռնազրոսիկ բացատրություն, ինչպես յեթե պնդելինք առաքինավոր արտամիտա ունեցող բոլոր կուլտուրաների միասնության։

Չինաստանում և Տրիպոլյեում կան գալարագիծ արտամիտա ունեցող կավանոթներ, կրետա-միքենյան կուլտուրայում՝ բուսական և կենդանական ոճավորված արտամիտա, իսկ Մուխաննաթ-Քափայում՝ միայն յերկրաչափական։

Այսպիսով, «միգրացիոն թեորիա» պաշտպանած կուլտուրաներն, այսպես կոչված՝ միասնության պրինցիպն անցյալի վրա կառուցված պրինցիպ է, որովհետև կուլտուրաների հիշյալ նմանությունների հիմքը պետք է փնտրել անառնական կյանքի նմանությունների մեջ, որոնց անցել են այդ ժողովուրդները տարբեր ժամանակներում։

Սակայն հարցը միայն այն չէ, որ միգրացիոն տեսությունը հիմնովին հակագիտական է. կարևորն այն է, որ այդ տեսությունը, որպես ռասայական տեսության վարխանաններից մեկը, ֆաշիստների ձեռքին ծառայում է իբրև զենք՝ իբրև հակահեղափոխական քաղաքականություն բացատրելու և արդարացնելու համար։

Ռասայական նախահայրենիքի, բնիկ ժողովրդի և կուլտուրական շրջանի տեսությունները ոգտվելով՝ ֆիննական ֆաշիստները ձգտում են ապացուցել, որ ֆիննները ԽՍՀՄ-ի հյուսիսի բնակիչներն են, որով հող են պատրաստում Բոռնեոյի ծոցից մինչև Ուրալյան լեռնաշղթան Մեծ Ֆինլանդիա կազմելու և ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիաներ նախապատրաստելու։

Գերմանական ֆաշիստները ոգտվելով կուլտուրական ոջախի տեսությունից, ձգտում են ապացուցել, որ իբր թե ԽՍՀՄ հանդիսանալով մի այլ կուլտուրական ոջախ, նրա ժողովուրդների

հեղափոխությունը պատրաստիր չի ուրիշ կուլտուրական շրջանի պատկանող ժողովուրդներ ունեցող Յևրոպայի համար[1]:

Այժմ էլ գերմանացի և լեհ հնագետները վիճում են միմյանց հետ այսպես կոչված բաուդիտյան կուլտուրայի մասին, որը պրահել և Արևելյան Գերմանիայի և Լենհատաների տարածքում մտնելը: Երանք վիճում են այն մասին, թե այդ կուլտուրան մեր ժողովրդին և պատկանել: Այսոնց, գերատան վեճի գերժամկի տակ, իրոք քաղաքական վեճ է տարվում լենհական միջանցքի և Սիլեզիայի մի մասի դեմ պատկանելու մասին:

Մենուն «առաջնական հատկանիշների հետևողության» տեսությամբ գերմանացիները պնդում են, որ բաուդիտյան կուլտուրայի կրողները 1400—500 թ.թ. (մեր թվ. առաջ) ենթացել են գերմանական ծագում, իսկ ըստ լեհերի՝ սլավոնական: Այսոնց ցեղում կողմերն էլ չեն ուզում հաշվի առնել այն փաստը, որ ցեղերը հազարամյակում (մեր թվ. առաջ) գերմանացիների և լեհերի մասին խոսելն ավելորդ է:

Այսպես կոչված «փոխառությունների տեսությունը» նույնպես հիմնված է առաջնական տեսության վրա: Յեթե միջրացիոն տեսությունը կապված է հնդեվրոպականության հետ, ապա փոխառությունների տեսությունը ենթադրվ է հանդիսանում թյուր շովինիզմին: Ըստ էության նա ճանաչում է բարձր և ստոր ռասաներ, ընդ որում այդ ստոր ռասաները հայտարարվում են բարձր ռասաների նվաճումների հաշվին ապրող, ընագծին անկուլտուրականության կրողներ: Ծորմալ համեմատական լեզվաբանը ևս բուրժուական գիտնականների սխրած մեթոդներից մեկն է: Այդ այսպես ասած մի ծրար է, որին կառչում են մեր գիտնականները իրենց անհայտ սուբյեկտիվ ենթադրյալ և, հետևապես, հակագիտական դրույթները ապացուցելու համար:

Ընդհանրապես համեմատությունները հնարավոր և անհրաժեշտ են, բայց չի կարելի համեմատել ցեղերու բոլորովին տարբեր ցեղություններ, առանց հաշվի առնելու տնտեսա-հասարակական միջավայրը, որի մեջ են գոյացել տվյալ ցեղությունները: Չի կարելի կարծեցյալ նմանության հիման վրա ժողովուրդների անցաշարժության և առաջնական նույնության մասին անել ցեղակացություններ: Բայց Բոգդանովիչին համեմատության վերցնելով արխալոգյան կերամիկայի արտադրանքը, այդ չի կապում նյութական

[1] „Советская этнография", 1931, № 1—2. *Пальвадро* М. Ю.-ի հոդվածը:

կուլտուրայի ինացած տարրերի հետ և այդու հանդերձ՝ հաշվի չի առնում կոնկրետ պատմական իրողությունները։ Որնամենատ մի քանի ելևէնտների կարծեցյալ ընդհանրություններ նա յեղրակացնում է բոլորովին տարբեր գոյացումների սոցիալական կարգի միատեսություններ՝ Ցանշաոյի եպոխայի Չինաստանից մինչև Տրիպոլյեն ներառյալ[1]։

Ինչպես հայտնի յե, արխայիկ գունագարդ կերամիկայի ուսումնասիրությունն այժմ գանվում է սպիտակին վիճակում, և առավել՝ նրա առանձին «կուլտուրաների» ուսումնասիրությունը։

Այնուամենայնիվ այն հնագիտները, որոնք կիրառում են ֆորմալ տիպոլոգիկ յեղանակ, չեն ձգտում իրենց յեղրակացությունները հաստատուն դարձնելու հուշարձանների օբյեկտիվ ավյալներով։ Որինակ՝ Բ. Ն. Վիշնևսկին իր „Доисторический человек в России“ աշխատության մեջ համեմատության է դնում Տրիպոլյեին, Ամառուի և Ալիաբատանի նյութերը։ Դրանով նա համեմատում է ծագումով և սկզբունքով բոլորովին տարբեր, իրար հետ վոչ մի ընդհանուր կապ չունեցող այժմեական մոռիլներ[2]։

Ինձ թվում է, ասածները բավական են ցույց տալու, թե հնագիտական առանձնահատկություններ և մանավանդ գունագարդ կերամիկայի պրոբլեմը լուծելու խնդրում միայնակ ոնատիպությունը ֆորմալ տիպոլոգիկ յեղանակը անանկ են և գիտության հետ վոչ մի առնչություն չունեն, իսկ ռասայական թեորիայի մասին, այդ ասելիքից, խոսք անգամ լինել չի կարող։

Հայաստանի գունագարդ կերամիկայի «կուլտուրան» Ցանշաոյի կուլտուրայի հետ ունի այնքան նմանություններ, որքան Անդրկովկասի բրոնզի դարձնելի գազանային վոճը Միջին գազանային վոճի հետ։ Այդ յերկուսի մի «կնոտրոնից» առաջացած համարելը բացարձակ արտուր կլիներ, նույնպես և անհնարություն կլիներ Մոհենջո-Դարոյի կուլտուրան մի որևիցե այլ տեղից յեկվոր համարելը։

Այսպիսով, ցույց տվինք, որ Հայաստանի գունագարդ կերամիկան ընդհանուր գծեր ունի Հայաստանի հնագույն և հետագարյան կուլտուրաների հետ, նա հանդիսանում է Հայաստանի

---

[1] *Равдоникас*, „По поводу статьи Богаевского“. Сообщ. ГАИМК., 1931, № 6, стр. 33.

[2] *Пасёк*, անդ, եջ 335.

կուլտուրական շերտացման անընդհատ ողակներից մեկը։ Սակայն այստեղից չի հետևում, որ կուլտուրաները Հայաստանում պոլիքիլեն են ունեցել անջատ կերպով։ ՀԽՍՀ կուլտուրաները՝ տերբոտրիալ տեսակներից և ժամանակագրականորեն հարևան շերտերի հետ ունեցած կապի մասին ամբողջական խոսելն այժմ դեռ վաղ է համարում։ Բավական և ասել, որ Խեմիական կուլտուրայի՝ մեր կուլտուրայի հետ ունեցած նմանության գծերը չեն սահմանափակվում միայն գունազարդ կերամիկայով, իսկ Վանյան կուլտուրայի հետ ունեցած կապը հաստատվում է խալդական տեսակներով և բազմաթիվ այլ փաստերով։

Ձեղրափակելով խոսքս, պետք է ասեմ, որ քննադատելով մերջերին տեսության կերտումը դեռնազարդ կերամիկայի բնագավառում, ամենևին մտադիր չեմ ժխտելու ժողովուրդների տեղաշարժի նշանակությունն իրրև այդպիսին։ Հանրածանոթ է, որ պատմության տարբեր ժամանակաշրջաններում շատ ժողովուրդներ տեղաշարժուններ են կատարել։ Այդ կապված է եղել արտադրության բնագավառում տեղի ունեցող արմատական փոփոխությունների հետ, ինչպես այդ մասին նշել է Կ. Մարքսը «Նամակներ Անդրխայի մասին» հոդվածաշարի մեջ։ Նմանապես հայտնի չէ, որ փոխառություններ և ազդեցություններ չեղին կարող տեղի չունենալ տարբեր (մանավանդ հարևան) ժողովուրդների մեջ։ Այդ կատարվել է սովորաբար համապատասխան սոցիալական պայմաններում։ Անհատմնաբանելով, երբ փոխառության և ազդեցության փաստերը դարձնում են հիմնական սկզբունք, բացարձակացնում կամ դրան տալիս են այլ խնդիրներ և դա գիտական դեկավար պրինցիպ ունենալով՝ փորձում են բացատրել անցյալ կուլտուրաների նմանության կամ տարբերության հարցերը, այդ արդեն գիտություն չէ, այլ ֆաշիստական բուրժուազիայի հերթական «գիտական» խեղկատակություն, որի նպատակն է՝ քաղցնելով իմպերիալիստական բուրժուազիայի մարքսիստական ուսանելիությունը, ծառայել նրան՝ իրական գիտության և դրա կրողի՝ պրոլետարիատի ու վերջինիս դաշնակցության՝ մարքսիզմի դեմ պայքարելու համար։

ՑԱՆԿ

Պատմագիտական գրականության, 1936 թվ.

Առանձին գրքերով

1. ԳՐՈՑ. ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ

«Հայաստանի պետական նահանգարհներն ըստ Պետիցգերյան հարտեզի», Գիտ. հրատ., Երևան, 276 եջ, գինը 12 ռուբլի:

Աշխատության մեջ հետևնական մանրազնին քննության են առնում Արտաշատ — Բագավան, Արտաշատ—Տիգրանակերտ, Արտաշատ—Հոյ—Գարնակա և, վերջիս հավելված՝ Դվին — Գարեգավ ճանապարհները, ճշտում և այդ ճանապարհների վրա ընկած կայանները, վերջիններիս միջև եղած տարածության չափը և տալիս և այդ ճանապարհների ուղղությունները: Աշխատությունը կցված են ճանապարհների քարտեզները և վերջում առանձին ու գերմաներեն լեզուներով արված և աշխատության ամփոփումը:

2. ԳՐՈՑ. ԴՐ. ԽՎ. ՋԱՎԱԽԻՇՎԻԼԻ

«Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար», Պետհրատ, Երևան, 41 եջ, վրացերենից թարգմանել յեվ ծանոթություններ գրել է պրոֆ. դր. Լ. Մելիքսեթ-բեկը:

Այս աշխատության մեջ պրոֆ. դր. Ջավախիշվիլին XIII դարի հեղինակ Սամվել Անեցու հաղորդած նյութերի հիման վրա մեկնաբանում և X դարի գյուղացիական շարժումները Տաշիր վանքի դեմ: Գրքին կցված են նաև Անիի վրաց և քաղքեդոնիկ հայ հոսի ու հոգևորականության միջև ծագած վեճերի վերաբերյալ մի քանի արժեքավոր նյութեր:

3. ԳՐՈՑ. ԴՐ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

«Վրաց սղբյուրներ Հայաստանի յեվ հայերի մասին», հատոր Ը, Պետհրատ, Երևան, 168 եջ, գինը 8 ռուբլի:

Աշխատությունը ներկայացնում և քաղվածքներ վրացերեն բնագրերից՝ հայերի և Հայաստանի մասին, սկսած XIII դարից մինչև XVIII դարը:

4. ՊՐՈՖ. ԱՇԽԱՐՀԻԿ ՔԱԼԱՆԹԱՐ

«Հին Վաղարշապատի պեղումները», Դիսերտաց, Ցերեվան, 95 եջ, գինը 3 ռուբլի 50 կոպեկ:

Աշխատությունը մեջ ամփոփված են 1931 թվին Հնությունների Պահպանության Կոմիտեի կողմից հին Վաղարշապատի շրջանում կատարված պեղումների արդյունքները, որոնք են պեղման ժամանակ կուրգաններից (դերեզմաններից) դուրս բերված իրերի գիտական բացատրությունը, պեղումների պրոցեսի և հայտնաբերված իրերի լուսանկարները և անհրաժեշտ բացատրությունները:

Գրքին կցված է յերկու հավելված — առաջինն՝ ակադեմիկոս Ս. Ա. Ժեբելովի հոդվածը հունարեն գամբանական արձանագրության մեկնաբանության մասին և յերկրորդ՝ Սոֆիա Թամամշյանի հոդվածը պեղումների ժամանակ գտնված «բրաձո» ցոլոնի ուսումնասիրության մասին:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 1936 ԹՎԻՆ

(Համառոտ ինֆորմացիա)

Հնագիտական աշխատանքների գծով Գաումության և Գրականության Ինստիտուտի՝ Հուշարձանների պահպանության բաժինը (նախկին առանձին կոմիտեն) 1936 թվին ընթացքում կատարել և հետևյալ աշխատանքները.

Ե ր ա զ դ ի ն ի ա ն ք ր . — Ա մ ա ղ ա խ յ ի շ ր ջ ա ն ո ւ մ անցակետը ամբողջ ընթացքում կատարված և ընդհանուր հետազոտական-անգիտաբացիոն շրջագայություն: Հայտնաբերված են 15-ի չափ կիկլոպյան ամրոցներ և VI—VII դարերի ճարտարապետական նոր հուշարձաններ: Նախնական ուսումնասիրության են յենթարկված Քենքի գյուղում քացված առաքելքյա հնագույն բնակարանները: Հայտնաբերված են նման տիպի առաքելքյա բնակարաններ Գյոլլի, Զախմախ, Փոքր Սարիար և Գյուլլերլուլազ գյուղերում: Կատարված են չափագրություններ և լուսանկարահանումներ:

Ա ր ք ի կ ի շ ր ջ ա ն ո ւ մ հուշարձանների առաջնային-լրացուցիչ անգիտաբացիա չի կատարված շրջանի հյուսիսային մասի գյուղերում: Հայտնաբերված են մի շարք հին գյուղատեղեր, հարտարապետական շենքեր, գերեզմանոցներ և այլն: Մարբված և Ղուշամանք և Մեջիքլի գյուղերի հուշարձանների շրջակայքը և հավաքված՝ քարված արժեքավոր բեկորները:

Գ ե ղ ա մ ա ն ք ր . — Գաումության և Գրականության Ինստիտուտի՝ Հուշարձանների պահպանության բաժնի և Ցեղնաձոր Քաղաքային Քանգարանի միջոցով մայիսից վերսկսվեցին պեղումները Մուխաննաթ-քարափում, որը ավարտվեցին մինչև հունիսի 14-ը: Այնուհետև սկսվեցին պեղումներ Շինգավիթի գյուղի մոտ, Զանգու գետի ձախ ափին ընկած բլուրների վրա: Այստեղի պեղումները պարզեցին, որ այդ վայրը հին բերդ-շեն է, որի բնակարանները կլորաձև են և գետնափոր: Առայժմ պեղված յերկու տիպիկ շենքերում հայտնաբերված մեծ կավե քրձած քաղարներն ունեն շատ օրիգինալ կառուցվածք, զեղչաքանդակ պարզարանքներով: 1937 թվին պեղումները այդ վայրում խոստանում են տալ ավելի հարուստ արդյունքներ:

Գեղումներ Անբերդում. — Լենինգրադի Երմիտաժի և Գիտությունների Ակադեմիայի Հայկական Թիլիսյի նախաձեռնությամբ ու մինչոցներով սկսվեցին, 1936 թվի հուլիսին, պեղումներ Անբերդում, գեկավարությամբ ակադեմիկոս Հ. Ա. Որբելու։ Գեղումներին մասնակցում էին պրոֆ. Տրեվերը, հնագետ Տոկարսկին, հնագետ Գիտերովսկին, հարտարապետհնագետ Ճակոբսոնը, Հուշարձանների Պահպանության բաժնի աշխատակիցներ՝ հնագետներ Ս. Բարխուդարյանը, Կ. Ղաֆադարյանը և այլն։ Գեղումներն Անբերդում տվին հարուստ արդյունքներ. բացված և յերկու մասից բաղկացած մի բաղնիք (XII դար), վորի տաք ջրի խողովակները յեղել են յերկաթե։ Հայաստանում դա յերկրորդ դեպքն է Անիից հետո, վոր հնագիտական պեղումների ժամանակ գտնվում են մեսագյա խողովակներ։ Գտնված են աղբույից գետի գիտը տանող գաղտնի անցքը, հախճապակյա անոթի բեկորներ, վորոնք կրում են չինական արվեստի բոլոր նշանները. ձեռք են բերված նաև բրոնզե իրեր, վորոնց մեջ նշանավորներն են XI—XII դարերին պատկանող, գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող 3 համանգներ և մի քանի աշատանկներ ու անուշահոտ բուրմունքների համար ծխարաններ։

Հետախուզական աշխատանքներ «Կարմիր-բլուր» (Զարբախ գյուղի մոտ). — «Կարմիր-բլրի» վրա գտնված խալդական նոր անապիլի արձանագրության բեկորի ձեռացած մասերը գտնելու նպատակով Պատմության և Գրականության Ինստիտուտի կողմից գործուղված՝ Հուշարձանների Պահպանության բաժնի գլխ. աշխատող Կ. Ղաֆադարյանին հաջողվեց պարզել գտնված անապրի բուն տեղը և վերցնել Զարբախ գյուղի բնակիչներից «Կարմիր-բլրի» արևմտյան ստորոտում գտնված խալդական ժամանակաշրջանի յերկու կարաս, վորոնք, ըստ պրոֆ. Լեհման Հաուպտի, ունեն բացառիկ պատմա-հնագիտական արժեք։ Այդ յերկու կարասները փոխադրված են Հրևանի Քանդարանը, վորտեղ 1936 թվին կենտրոնացված և Հայաստանում գտնվող խալդական արձանագրություններն ու մեծագույն մասը։

Նույն վայրում ընկ. Ղաֆադարյանը ձեռք է բերել բրոնզե չինական կացնի քարե կաղապար, վորը Հայաստանում գտած կաղապարների մեջ թվով յերրորդն է (առաջինը գտնվել է 1934 թվին, Լենինականում, իսկ յերկրորդը՝ Ջերմանի մոտ, Մուխանովաթ-թափիում, 1936 թ.)։

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(1936 թ.)

Պետական պարբերականներում

1. Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ. — «Պատմահնագիտական-ազգագրական ղեկավարությունները» ՀԽՍՀ Գաղմության և Գրականության Ինստիտուտի Տեղեկագիր, I գիրք, էջ 81—123.

Համառոտ հաղորդագրություններ պատմական յեվ հնագիտական հարցերի մասին (տպագրված «Սովետական Հայաստան» ամսաթերթում, 1936 թվին).

1. Բացառիկ արժեք ունեցող հնություններ, № 68 (4666).

2. «Մալդներեն լեզվի բանալին» — Ա. Ա., № 79 (4677). (գրախոսություն Ա. Գալշգալի՝ «Մալդներեն լեզվի բանալին» գրքի մասին).

3. «Մուխանեաթ-քաֆայի պեղումները»—Բայրուզյան, № 127 (4725).

4. Գրաֆ. Ալ. Բալանքաթ —«Հին Վազարշապատի պեղումները»— գրախոսություն Բայրուզյանի, № 133 (4731).

5. «Հանրերգի պեղումները — գրույց ակադեմիկոս Հ. Որբելու հետ», № 154 (4752).

6. «Մալդական արձանիկը» — № 211 (4809).

7. «Հանրերգ ամրոցի պեղումները» — 239 (4837).

8. «Գայլեկոնած կացին» — Բայրուզդ, № 273 (4871).

ПЕРИОДИЧЕСКИЕ ИЗДАНИЯ ПО ВОПРОСАМ ИСТОРИИ И АРХЕОЛОГИИ (1936 ГОД).

1. Труды Азербайджанского Филиала Ак. Наук, т. XXV, Баку (Армян. история).

Е. А. Пахомов: „Башни-мавзолеи в Барде и их надписи".

Его же: „К описанию чекана г. Ани", стр. 137—140.

2. „Армянский этнограф-археолог Е. А. Лалаян", Л. М. Меликсет беков—„Советская этнография", № 4-5, стр. 225—227.

3. „Святыни у перевалов"—*Ст. Лисицян*, „Советская Этнография", № 4—5, стр. 200—212.

4. „Армянская этнография за 15 лет"— *Ст. Лисицян*—„Советская этнография", № 4-5, стр. 270—274.

5. „Обзор литературы по этнографии и археологии Кавказа за три года". — Б. Е. Дегян-Ковалевский. „Советская этнография", № 4-5, стр. 277—303. *(Տեսվում և նաև Միջհրգայինն Հայաստանում վերջին տերում լույս տեսած պատմական, հնագիտական և ազգագրական գրականության մասին).*

6. *Е. Т. Кагаров*—„Иностранная литература по этнографии Кавказа за последние 10 лет". *(Տեսվում և նաև հայերի մասին).* „Советская этнография", № 4-5, стр. 274—277.

7. „Материалы для библиографии Кавказа"— *И. Пульнер*, — „Советская этнография", № 4-5, стр. 230—270.

ЗАМЕТКИ ПО ВОПРОСАМ ИСТОРИИ И АРХЕОЛОГИИ НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ „КОММУНИСТ" (ЕРЕВАН) ЗА 1936 Г.

1. Памятники XIII века до нашей эры, № 49 (491).
2. Археологические находки, — Евг. Байбуртян, № 69 (511).
3. К раскопкам „Муханнат-тапы", — № № 113 (555), 117 (559), 120 (562), 138 (580).
4. Музей древностей, — № 137 (579).
5. Новые раскопки на берегу Занги, — Байбуртян, № 143 (585).
6. Археологические раскопки в районе Либерт, — № 143 (585).
7. Раскопки Шингавитского городища, — Байбурт, № 162 (604).
8. Серебряная монета императора Августа, — Байбурт, № 217 (569)
9. Армения — страна древней архитектуры, № 217 (569).
10. Раскопки древнего города Дманиси в Грузии, № 237 (579).
11. Новая халдская надпись, — Байбурт, № 249 (691).
12. Палеолит в Армении, — Байбурт, № 259 (694).
13. Барельефы XIV века, № 259 (701).
14. Литейная форма, № 268 (710).
15. Хетитская культура, на докладе проф. Грозного, № 282 (724)
16. Проф. Грозный в Ереване, № 264 (725).

. . . . . .

. . . . . .

Գաս. խմբագիր՝
ՀԵՆՐԻ ԳԱՓՐԻԵԼՅԱՆ

. . . . . .

. . . . . .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		էջ
1.	Ընկեր Որջոնիկիձեյի հիշատակին	3—4
2.	Յերբեք չեն ապուռանա Սերգոյի անունն ու փառքը	5—8
3.	Գրիգորի Կռնատանախնովիչ (Սերգո) Որջոնիկիձե	8—27
4.	Գրիգորի Կռնատանախնովիչ Որջոնիկիձեյի հիշատակին նվիրված ազգ նիստը—	
	ա) Ընկեր վ. Մ. Մոլոտովի ճառը	27—31
	բ) Ընկեր Լ. Գ. Բերիայի ճառը	31—33
5.	Կուսակցական աշխատանքի քերուքյունների և տրոցկիստական ու այլ յերկբևեռանենների լիկվիդացիայի յենթարկելու մեջոցառումների մասին։ Ընկեր ՍՍԱՀՄ-ի զեկուցումը Համ. Կ (բ) Կ կենտկոմի պլենումում, 1937 թ. մարտի 3-ին	35—65
6.	Ընկեր ՍՍԱՀՄ-ի յեզրափակման խոսքը Համ Կ (բ) Կ կենտկոմի պլենումում, 1937 թ. մարտի 5-ին	66—84
7.	Խաչիկ Սամուելյան—Մարկուքյունը հին Հայաստանում	87—141
8.	Հակոբ Զորյան—Արու Ցուսուֆ Ցակուբ—Հոգային հարկի գիրքը	143—170
9.	Գրոմ. Աբխ. Բալանքար—Մի հնագույն ջրաքաշնական նշանակեմ Քարհրգայլին Հայաստանում	171—194
10.	Ս. Բարխուդարյան—Նյութեր հայ ժողովրդի նքնիկական կազմի մասին	195—221
11.	Կ. Ղաֆադարյան—Կարմիր-բլրի նորագյուտ անպագիր արձանագրությունը	222—236
12.	Հ. Մանվելյան—Մի նշ Հայաստանի պատկարգային պայքարի պատմությունից (XIII դար)	237—244
13.	Գաբեգին Լեվոնյան—Արձանագործության և քանդակը պատմական Հայաստանում	245—267
14.	Ցեվգենի Բալյուզեյան—Հայաստանի գունագարդ կերամիկայի պրոբլեմը	268—308
15.	Ցանկ պատմագիտական գրականության (1936 թ.)	309—310
16.	Հնագիտական աշխատանքներ 1936 թ. (համառոտ ինֆորմացիա)	310—311
17.	Հնագիտական մատենագրություն	312—313

СОДЕРЖАНИЕ

		Стр.
1.	Памяти товарища Орджоникидзе	3—4
2.	Никогда не померкнут имя и слава Серго	5—8
3.	Григорий Константинович (Серго) Орджоникидзе	8—27
4.	Траурное заседание, посвященное памяти Григория Константиновича Орджоникидзе:	
	а) Речь тов. В. М. Молотова	27—31
	б) Речь тов. Л. П. Берия	31—33
5.	О недостатках партийной работы и мерах ликвидации троцкистских и иных двурушников.—Доклад товарища СТАЛИНА на Пленуме ЦК ВКП (б) 3 марта 1937 г. . .	35—65
6.	Заключительное слово товарища СТАЛИНА на Пленуме ЦК ВКП (б) 5 марта 1937 г.	66—84
7.	*Хачик Самуэлян*—Рабство в древней Армении	87—141
8.	*Акоп Зорьян*—Абу Юсуф Якуб, „Книга земельного налога"	143—170
9.	*Проф. Ашх. Каланта*р—Одна древнейшая оросительная система в Советской Армении	171—194
10.	*С. Бархударян*—Материалы по этническому составу армянского народа	195—221
11.	*К. Кафадарян*—Новонайденная клинообразная надпись из „Кармир-блур"	222—236
12.	*О. Манвелян*—Страница из истории классовой борьбы Армении (XIII век)	237—244
13.	*Гарегин Левонян* — Скульптура и резьба в исторической Армении	245—267
14.	*Евгений Байбуртян*—Проблема крашенной керамики Армении	268—308
15.	Перечень историографической литературы (1936 г.) . . .	309—310
16.	Археологические работы в 1936 г. (краткая информация) .	310—311
17.	Археологическая библиография	312—313

ՀԱՅԿ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0649791

(504)

ԳԻՆԸ 4 Ռ.

Կուչ
3465

ВЕСТНИК ИНСТИТУТА

Истории и Литературы Армянской ССР

КНИГА II

Ереван 1937